

ԱՊԱԳԱՅԻ ՁԵՎՎՈՐՈՒՄԸ Գազիկ Տեր-Չարությունյան

Ապագայի կանխատեսումը մշտապես եղել է մարդկությանը հուզող խնդիրներից մեկը: Դեռևս մ.թ.ա. 2-րդ հազարամյակում հունական Դելփի քաղաքի Ապոլոնի տաճարի քրոնիհիներն անտիկ աշխարհին հայտնի էին կանխատեսումներ կատարելու կարողությամբ, եւ որեւէ նախաձեռնություն սկսելուց առաջ թագավորներն ու զորավարները պարտադիր այցելում էին այդ տաճար: «Դելփյան կանխատեսումների» մի մասը պահպանվել է եւ դրանց՝ արդեն մեր օրերում կատարված վերլուծությունից հետևում է, որ կանխագուշակումների զգալի մասը՝ 41%-ը, հայտնի իրողությունների ամրագրում էր ներկայացնում, 32%-ը՝ հրահանգ-հրաման, գործողություններ արգելող ցուցումները կազմել են 22%, ապագայի սխալ գուշակությունները՝ 3%, իսկ իրականացել է կանխատեսումների ընդամենը 2%-ը:

Չնայած կանխատեսումների նման արդյունքներին, այսօր էլ մեծ թվով գործիչներ, ձեռներեցներ եւ հասարակ մահկանացուներ դիմում են զանազան բախտագուշակների ու փորձում հասկանալ, թե ինչ է իրենց սպասում մոտ կամ հեռու ապագայում:

«Դելփի» տեխնոլոգիան: Նորագույն շրջանում ապագայի կանխատեսումներն ընդունեցին ավելի համակարգված բնույթ, իսկ ոլորտը ստացավ գիտական անվանում՝ ֆուտուրոլոգիա: Սկզբնական շրջանում ֆուտուրոլոգները գլխավորապես գրողներ եւ փիլիսոփաներ էին, որոնց կանխատեսումները սեփական ինտուիցիայի եւ երեւակայության արգասիքն էին: Պետք է ընդունել, որ նման կանխատեսումների մի մասը ոչ միայն լայնացրեց ժամանակակիցների մտահորիզոնը, այլեւ իրագործվեց ապագայում: Սակայն ֆուտուրոլոգիան վերածվեց գիտափորձագիտական մեթոդի, թերեւս, նախորդ դարի երկրորդ կեսին, երբ ամերիկյան ՌԵՆԴ «ուղեղային կենտրոնի» աշխատակիցներ Գորդոնը եւ Չելմերը մշակեցին կանխատեսումների տեխնոլոգիա, որն ի պատիվ վերոնշյալ Ապոլոնի տաճարի տեղանվան՝ կոչվեց «Դելփի»: Այդ մեթոդի էությունը հետևյալն է. ապագայում հետազոտվող խնդրի հնարավոր զարգացումների վերաբերյալ կատարվում են մի քանի փուլանի, հաջորդաբար ճշգրտվող հարցումներ ոլորտի փորձագետներին: Արդյունքում ստացված պատասխանները եւ գնահատականները համադրվում են եւ որոշակի ձեւերով մշակվում:

Անշուշտ, «Դելփի» տեխնոլոգիան արդյունավետ կիրառելու համար անհրաժեշտ են բարձր որակավորում ունեցող փորձագիտական ռեսուրս եւ այդ ռեսուրսի կիրառման ձեւավորված մշակույթ: Այսօր «Դելփի» տրամաբանական եւ գաղափարախոսական հենքի վրա կիրառվում են առնվազն 10-15 կանխատեսման մեթոդներ (որոնցից հատուկ նշենք սցենարային մշակումները), որոնք լայնորեն օգտագործվում են մի շարք երկրներում. դրանց միջոցով տրվում են ապագայի փորձագիտական գնահատականներ քաղաքականության, տնտեսության, գիտության, տեխնիկայի եւ այլ ոլորտներում:

Նշենք, որ վերջին ժամանակներում գլոբալ մասշտաբի կանխատեսումների թիվը զգալի աճել է: Օրինակ, վերջերս հրատարակվեց հայտնի STRATFOR կազմակերպության ղեկավար Ջորջ Ֆրիդմանի «Հաջորդ հարյուր տարին» ուշագրավ աշխատությունը: «Կանխատեսումների շուկայում» առանձին տեղ է գրավում 2008-ի վերջին ԱՄՆ Միացյալ ռազմաօդային հրամանատարության (USIFCOM) կողմից հրապարակված «Միացյալ ռազմաօդային գործողությունների միջավայրը» (The Joint Operating Environment – JOE) փաստաթուղթը, որում Պենտագոնի մասնագետները փորձ են կատարել կանխատեսել քառորդ դար հետո մեր մոլորակի վրա սպասվող ռազմաքաղաքական իրավիճակը:

Պենտագոնի փոխտնօրինությունը: Հատկանշական է, որ ամերիկյան զինվորականներն իրենց վերլուծությունը սկսում են անցյալի փորձի եւ որոշ խոհափիլիսոփայական խնդիրների դիտարկումից: Ըստ նրանց՝ պատերազմի եւ խաղաղության վերաբերյալ պատկերացումները, որոնք ձեւավորել էին դեռեւս Սոււ-Ցզին (մ.թ.ա. 6-րդ դար) եւ արդեն 19-րդ դարում՝ Կարլ Ֆոն Կլաուզեֆիցը, առայսօր մեծ փոփոխություններ չեն կրել: Հատկանշական է, որ հաղթանակի բանաձեւը 21-րդ դարի ամերիկյան ստրատեգները, ինչպես եւ Սոււ-Ցզին, տեսնում են ճանաչողության հարթությունում, այդ իսկ պատճառով հաճախ են անդրադառնում չին դասականի ձեւակերպմանը. «Եթե գիտես քեզ եւ գիտես թշնամուդ, ապա միշտ կհաղթես, եթե գիտես քեզ, բայց չգիտես թշնամուդ, մեկ կհաղթես, մեկ կպարտվես, եթե չգիտես քեզ եւ չգիտես թշնամուդ, ամեն մի ճակատամարտ հղի է պարտությամբ»:

Չի կարելի չհամաձայնել նաեւ փաստաթղթում տեղ գտած այն պնդման հետ, որ ներկայիս քաղաքական լիդերները բավական ուշ են գիտակցում եւ ըմբռնում տեղի ունեցող արագ փոփոխությունները, իսկ ապագայի վերաբերյալ նրանց պատկերացումները հաճախ ընդամենը առօրյայի իրողությունները պարզ էքստրապոլյացիայի միջոցով ապագա

տեղափոխելու փորձ են: JOE-ի հեղինակներն այս խնդրին մոտենում են ինքնաքննադատորեն և մատնանշում են այն սխալները, որոնք թույլ է տվել ամերիկյան ռազմաքաղաքական դեկավարությունն անցյալում՝ անգամ մոտ ապագայի վերաբերյալ ունեցած թյուր պատկերացումների հետևանքով:

Ամերիկյան ստրատեգներն առանձնապես կարեւորում են իշխանութիւնների քաղաքական կամքի գործոնը, որի առկայությունն անգամ սակավ ռեսուրսների տիրապետող երկրներին ընձեռում է մեծ հեռանկարներ:

Գլոբալ տնտեսությունն ապագայում: Համաձայն Պենտագոնի փորձագետների, հաջորդ 25 տարում համաշխարհային տնտեսությունն աճելու է ավելի քան երկու անգամ, և \$100 մլրդ-ը գերազանցող ՀՆԱ են ունենալու ոչ միայն ներկայիս տնտեսական հսկաները, այլև Բանգլադեշը, Նիգերիան, Պակիստանը, Ֆիլիպինները և Վիետնամը: Այդ երկրները փորձելու են առաջատար ռազմաքաղաքական դերակատարում ձեռք բերել իրենց տարածաշրջաններում և իրենց շուրջ ձեւավորել համապատասխան միավորումներ: Բոլոր պարագաներում ԱՄՆ-ը իր \$21 տրլն ՀՆԱ-ով լինելու է տնտեսական ոլորտի առաջատարը, սակայն նրան այդ ցուցանիշով ընդհուպ մոտենալու է Չինաստանը (\$16 տրլն), որը և համարվում է Միացյալ Նահանգների հիմնական մրցակիցն ապագայում նույնպես: Մնացյալ երկրներն էապես զիջելու են այդ տերություններին (Ճապոնիա՝ \$7 տրլն, Հնդկաստան՝ \$6 տրլն, Գերմանիա և Մեքսիկա՝ \$4 տրլն և այլն):

Փաստաթղթում շեշտադրվում է, որ եթե չձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր, ապա արդեն մոտ ապագայում պետք է սպասել էներգետիկ ճգնաժամի. այսօր նավթահանումն աշխարհում ունի կարծես թե տեխնոլոգիական սահման՝ օրական 110 մլն բարել, սակայն արդեն 2012թ. պահանջվելու է օրական 186 մլն բարել, և դեռ պարզ չէ, թե ինչպես է լուծվելու այդ խնդիրը:

Սակայն միայն էներգետիկ խնդիրները չեն, որ սպառնում են մարդկությանը: Համաձայն JOE-ի, 2030թ. ջրի պակասը սպառնալու է մոտ 3 մլրդ մարդու, իսկ Մերձավոր Արեւելքին և Հյուսիսային Աֆրիկային իրական «ջրային սով» է սպասվում: Ուշագրավ է, որ Թուրքիայի կողմից Տիգրիսի և Եփրատի վրա կառուցվող ջրամբարները լուրջ խնդիրներ են ստեղծելու այդ երկրի և Իրաքի ու Սիրիայի միջև, ինչը կարող է պատերազմական գործողությունների առիթ հանդիսանալ:

Ինովացիոն պայքար եւ տեղեկատվական պատերազմ: Պենտագոնի փորձագետներն ընդունում են, որ քաղաքականապես եւ տնտեսապես ԱՄՆ-ը կորցնում է բացարձակ մենատիրական դիրքերը, սակայն համոզված են, որ նախկինի պես այդ տերությունը գերակայելու է ինովացիաների (նորարարությունների) ոլորտում: Առանձնակի շեշտվում է, որ ապագայի պատերազմներում հաղթանակի գրավականն են հանդիսանալու երեւակայությունը եւ ինտելեկտը, իսկ այդ պատերազմները կարելի է որակել որպես մարդկանց «մտքի եւ հոգու» համար մղվող պայքար: JOE-ի փորձագետներն անվերապահորեն համոզված են, որ տեղեկատվությունը «ռազմավարական զենք է» եւ ելնում են այն դրույթից, որ «տեղի ունեցածի ընկալումն ավելին է նշանակում, քան տեղի ունեցածը»:

Այդ համատեքստում հատկանշական է, որ ռազմական գերատեսչությանը խիստ հուզում է այն, որ ամերիկյան բուհերում նկատվում են կազմավորման երեւույթներ, եւ նրանք սկսել են զիջել իրենց մակարդակով, օրինակ, հնդկական եւ չինական համալսարաններին: JOE-ի հեղինակների կարծիքով, ամերիկյան գիտակրթական ոլորտը կարիք ունի լուրջ կատարելագործումների եւ բարելավումների:

Որոշ հետեւություններ: Չարկ է նշել, որ վերջին մեկ-երկու տասնամյակում հեղինակավոր կազմակերպությունների (օրինակ՝ ԱՄՆ հետախուզության ազգային խորհրդի – NIC, Յամաշխարհային բանկի եւ նույն JOE-ի) կողմից հրապարակված կանխատեսումները որոշակիորեն ազդում են տարբեր երկրներում որոշումների ընդունման մեխանիզմի վրա: Ի լրումն, «հեղինակավոր կանխատեսումները» դարձել են նաեւ յուրահատուկ տեղեկատվական-հոգեբանական ազդեցության զործոն, քանի որ դրանք ներգործում են նաեւ միջազգային հանրության վրա: Յանգամանքների այս համալիրն ակնհայտորեն անդրադառնում է ընթացիկ զարգացումների վրա, ուղղորդում դրանք եւ այդպիսով ձեւավորում ապագան՝ ինչ-որ չափով համապատասխան կատարված կանխատեսումներին (հիշենք Դելֆիի քրմուհիների հրաման-հրահանգները):

Միեւնույն ժամանակ, «հեղինակավոր կանխատեսումները» բարձրակարգ մասնագետների կոլեկտիվ աշխատանքի արդյունք են եւ օգտակար տեղեկատվություն են պարունակում ոչ միայն սեփական ղեկավարության, այլեւ ուրիշների համար: Այդ առումով, ըստ մեզ, ուսանելի են հատկապես JOE-ի հեղինակների փիլիսոփայությունը եւ, մասնավորապես, մոտեցումները գիտելիքների ոլորտին ու ճանաչողության խնդիրներին:

Այս համատեքստում, օրինակ, մենք բավական աղոտ պատկերացումներ ունենք Ադրբեջանի վերաբերյալ. խոսքն այստեղ այդ երկրի ռազմական ներուժի մասին չէ, ինչին պետք է որ քաջատեղյակ լինեն մեր զինվորականները: Բավական է նշել, որ առայսօր ՀՀ-ում հազվագյուտ են ադրբեջաներեն լեզվին տիրապետողները, մենք աղոտ ենք պատկերացնում այդ ժողովրդի մշակույթը, էթնոհոգեբանությունը եւ այլն: Իրավիճակը գրեթե նույնն է մեր մնացյալ հարեւանների առումով: Սակայն ամենավատն այն է, որ մենք բավարար գիտելիքներ չունենք նաեւ Հայության, այսինքն՝ մեր մասին: Ինքնաճանաչումն ու այլոց ճանաչումը այն զենքերն են, առանց որոնց մեր ապագայի ձեւավորումը մենք հանձնում ենք նրանց, ովքեր տիրապետում են այդ զենքերին:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԶԵՆՔ **Սուրեն Մանուկյան**

2009թ. մայիսի 15-ին ՌԴ նախագահի հրամանագրով ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով, որը պետք է պայքարի Ռուսաստանի շահերին հակասող պատմական փաստերի կեղծման դեմ: Հունիսի 1-ին ԵԱՀԿ ԽՎ-ն ընդունեց «Բաժանված Եվրոպայի միավորումը՝ մարդու իրավունքների եւ քաղաքացիական ազատությունների պաշտպանությունը 21-րդ դարում» բանաձեւը, որով դատապարտում է նացիզմի եւ ստալինիզմի հանցագործությունները:

Այս երկու փաստաթղթերի միջեւ թեւեւ անմիջական կապ չկա, սակայն բացահայտվում է պատմության քաղաքականացման միտումը, երբ պատմությունը սկսում է օգտագործվել որպես զենք արտաքին քաղաքական խնդիրներ լուծելու համար:

Պատմության քաղաքականություն

«Պատմության քաղաքականությունը» սեփական երկրի եւ հարեւանների պատմության վերաշարադրումն է օրվա քաղաքական խնդիրների համատեքստում: Այն վերջին տարիներին արեւելաեվրոպական պետությունների հասարակական կյանքի անբաժանելի մասն է: Դա նոր երեւույթ է, սակայն այսօր ձեռք է բերել նոր որակ:

Պատմությունը միշտ էլ այս կամ այն կերպով քաղաքականացված է եղել: Պատմաբաններն օգնում են պետությանը՝ դաստիարակելու լավ քաղաքացիներ, օրինակելի սերունդ: Պատմության դասագրքերը ձեւավորում են ազգային մտածողություն ու սերմանում հավատարմություն սեփական ազգի եւ պետության նկատմամբ՝ միաժամանակ հստակ մատնանշելով հակառակորդին: Ի վերջո, հենց պատմությունն է սովորեցնում՝ ինչպես ընկալել իրականությունը եւ ինչ քաղաքականություն վարել այլ ազգերի նկատմամբ:

XX դարի վերջին թվում էր, թե պատմության հսկայական դերն արդեն անցյալում է: Աշխարհը գլոբալացվում էր համընդհանուր արժեքների շուրջ, հիմնական շեշտը դրվում էր միավորիչ նախագծերի վրա, եւ այս իրավիճակում կարելուվում էր ոչ թե ռազմական հաջողությունների ընդգծումը, այլ ընդհանուր մշակութային ժառանգության գնահատումը եւ սոցիալական պատմությունը: Վերջին տարիներին իրավիճակը սկսեց փոխվել:

Հիշողության պատերազմները Արեւելյան Եվրոպայում

Ամեն ինչ սկսվեց Արեւելյան Եվրոպայում: Նախկին սոցիալիստական երկրները եւ խորհրդային հանրապետություններն անկախություն ձեռք բերելուց հետո շատ շուտ բախվեցին սեփական հասարակությունները միավորող գաղափարների բացակայությանը, որը որոշ երկրներում ավելի ծանր հետեւանքների, նույնիսկ ինքնության ճգնաժամի պատճառ դարձավ: Այս պայմաններում փորձ կատարվեց ելքը գտնել սեփական պատմության վերհիմաստավորման մեջ:

2003թ. լեհ պատմաբան Անջեյ Նովակը «Ռեչ Պոսպոլիտա» թերթում սպառնալիք հնչեցրեց. «վերջին ժամանակները գերմանացիները եւ ռուսները սկսել են իրենց պատմության շարադրանքում ինչ-որ բաներ վերանայել եւ, երեւում է, չեն պատրաստվում այլեւս համակերպվել իրենց վերագրվող «դահիճների» դերին: Մենք պետք է կանխենք այս միտումը»: Ռուսաստանն ու Գերմանիան դարձան այն հիմնական թշնամական կերպարները, որոնց հետ հարաբերություններում Վարշավան պարբերաբար սկսեց օգտագործել պատմությունը: Այսպես, նախագահ Լեխ Կաչինսկին միասնական Եվրոպայում թաքնված սպառնալիքների մասին ուղերձը նախընտրեց արտասանել 1939թ. Գերմանիայի քարտեզի ֆոնին, իսկ ԵՄ խորհրդարանում ներկայացուցչությունը ըստ բնակչության թվի սահմանելու գերմանական առաջարկին պատասխանեց. «Եթե գերմանացիները Երկրորդ համաշխարհային ժամանակ այդքան շատ լեհեր չսպանեին, ապա մենք շատ ավելի մեծաթիվ կլինեինք, այնպես որ Լեհաստանին ավելի շատ տեղ է հասնում»: Ռուսաստանի հետ հարաբերություններում մշտապես շեշտադրվում են ռուսական կայսերապաշտությունը եւ Կատինի դեպքերը:

Լեհաստանում պատմությունը նաեւ օգտագործվում է ներքաղաքական պայքարում: Երկրում 1998 թվականից գործում է Ազգային հիշողության ինստիտուտը, որտեղ պահվում են կոմունիստական Լեհաստանի անվտանգության ծառայությունների արխիվները: Դրանց միջոցով ճշտվում է՝ արդյո՞ք ընտրովի պաշտոններ զբաղեցնող քաղաքական գործիչները համագործակցել են կոմունիստական անվտանգության ծառայության մարմինների հետ: Պատահական չէ, որ Կաչինսկի եղբայրները Լեհաստանի 11 քաղաքներում 1200 աշխատակից ունեցող այս ինստիտուտին մեծ լիազորություններ են տվել եւ նրա պատասխանատու պաշտոնները փաստորեն քաղաքական պաշտոնների վերածել:

2006 թվականից Ազգային հիշողության ինստիտուտ կա նաեւ Ուկրաինայում: Ուկրաինական պետությունն ակտիվորեն մասնակցում է պատմական երկու թեմաների ձեւակերպմանը եւ հիմնավորմանը՝ Ուկրաինական ապստամբական բանակը պայքարել է խորհրդային օկուպացիայի

դեմ, իսկ հոլոդոմորը խորհրդային իշխանությունների նախաձեռնած ուկրաինացիների ցեղասպանություն է: Վերջին թեման սկսում է օգտագործվել իբրև արտաքին քաղաքականության զենք: 2008թ. Կիևը նախաձեռնեց «Ուկրաինան հիշում է, աշխարհը ճանաչում է» նախագիծը, իսկ նախագահ Յուշչենկոն նույնիսկ առաջարկում է քրեական պատասխանատվության ենթարկել հոլոդոմորի ցեղասպանական էությունը ժխտողներին: Այդ ուղղությամբ ակտիվ աշխատանքներ է տանում նաև «Ուկրաինա-3000» հիմնադրամը, որը գլխավորում է նախագահ Յուշչենկոյի կինը:

Լատվիայում 1998թ. ստեղծվեց պատմաբանների հանձնաժողով, որի հիմնական խնդիրներից է պաշտոնական անձանց «Լատվիայի դեմ խորհրդային տոտալիտարիզմի հանցագործություններ» թեմայով թեզերի մատակարարումը: Միաժամանակ Լատվիայում գործում է ԽՍՀՄ օկուպացիոն վարչակարգի գոհերի թվի մասին տեղեկությունները համակարգող ու լատվիական պետությանը եւ նրա բնակիչներին հասցված վնասի հաշվարկման կառավարական հանձնաժողովը, որը ծրագրում է 2010թ. ֆինանսական վնասի հատուցման հաշիվ ներկայացնել Ռուսաստանին:

Էստոնիայում նման հանձնաժողով ստեղծվել էր 1993թ., որը 2003թ. հրապարակեց «Օկուպացիաների պատճառով Էստոնիային հասցված կորուստների Սպիտակ գիրքը»: Էստոնիայի նախագահին կից նաև գործում է Մարդկության դեմ հանցագործությունների ուսումնասիրման էստոնական միջազգային հանձնաժողովը, որի գործունեությունն ավարտվեց 2009թ. սկզբին եւ խոսք է գնում նրա հիմքի վրա լեհական օրինակով Ազգային հիշողության ինստիտուտի ստեղծման մասին:

Լիտվայում նախարարների խորհրդին կից գործում է Ցեղասպանության եւ դիմադրության կենտրոնը: Կիևում եւ Թբիլիսիում բացվել են խորհրդային օկուպացիայի թանգարաններ:

Պատմական հանձնաժողով բազմաթիվ հարցականներով

ՌԴ նախագահին կից ստեղծված՝ Ռուսաստանի շահերին հակասող պատմության զեղծարարության դեմ հանձնաժողովի հիմնական խնդիրները պետք է լինեն՝ ՌԴ միջազգային հեղինակության նվազեցմանն ուղղված պատմական փաստերի եւ իրադարձությունների կեղծման մասին տեղեկատվության ընդհանրացումը, վերլուծությունը, հակազդեցության ռազմավարության մշակումը եւ ՌԴ նախագահին համապատասխան միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ առաջարկներ ներկայացնելը, ինչպես նաև պատմության կեղծման փորձերին ադեկվատ արձագանքելու եւ հնարավոր բացասական հետեւանքների չեզոքացման ուղղությամբ քայլերի մշակումը:

Չրամանագրի ստորագրման ժամանակը՝ մայիսը, նույնպես պատահական չէր ընտրված: Մայիսի 9-ին, Հայրենական պատերազմում տարած հաղթանակի առիթով իր ուղերձում, Դ.Սեդվեդեւը նշեց, որ պատմության կեղծարարության փորձերը «դառնում են ավելի կոշտ, ավելի դաժան եւ ազդեցիկ»: Եվ ստեղծված հանձնաժողովի հիմնական առաքելությունը ենթադրաբար լինելու է հակազդեցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի հաղթանակում ԽՍՀՄ ավանդի արժեզրկման փորձերին:

Նախկին խորհրդային հանրապետություններից մի քանիսում Երկրորդ աշխարհամարտի վերաշարադրման գործընթացը բարձրացվել է պետական մակարդակի, եւ Մոսկվան ուղղակի ստիպված է պաշտպանել սեփական անցյալը: Ռուսաստանն իր հերթին մեղադրում է Էստոնիային եւ Լատվիային նացիզմը արդարացնելու մեջ՝ նկատի ունենալով հիտլերյան բանակում ծառայած ՍՍ-ականների մասնակցությամբ շքահանդեսների կազմակերպումը, նյարդայնանում է, երբ Ուկրաինան սովն անվանում է ցեղասպանություն, մինչդեռ ԽՍՀՄ այլ տարածքներում մարդիկ նույնպես զանգվածաբար սովամահ էին լինում: Լեհերի փորձերը՝ հետաքննել պատերազմի ժամանակ լեհական սպաների զնդակահարումը Կարմիր բանակի կողմից, կոշտ կերպով են ընդունվում, քանի որ Մոսկվան ժամանակին բացել է բոլոր փաստաթղթերը: Իսկ լարվածության գագաթնակետը դարձավ 2007թ. Տալլինում Կարմիր բանակի զինվորներին նվիրված հուշարձանի տեղափոխումը քաղաքի կենտրոնից: 2007թ. փակվեց նաեւ ոչնչացված խորհրդային քաղաքացիներին նվիրված ցուցադրությունը Օսլենցիմի ճամբարում գործող թանգարանում: Այս ամենն ընկալվում է որպես տեղեկատվական պատերազմ, որի դեմ անհրաժեշտ է պայքարել:

Սակայն, այս ամենով հանդերձ, հանձնաժողովի ստեղծման հրամանագիրը մի քանի հարցեր է առաջացնում:

Երկակի գնահատականների տեղիք է տալիս հանձնաժողովի անվանումը: Օրինակ, եթե տեղի է ունենում պատմության կեղծարարություն, որը Ռուսաստանի շահերին չի վնասում, արդյո՞ք դա թույլատրելի է: Անհասկանալի է, թե ինչ չափորոշիչներով է առաջնորդվելու հանձնաժողովը՝ տարանջատելու կեղծարարությունը մեկնաբանությունից, եւ ինչ հակամիջոցներ այն կարող է կիրառել: Շատերը, օրինակ՝ հայտնի Մեմորիալ կազմակերպության ներկայացուցիչները, տազնապում են, որ սա կարող է տանել դեպի խորհրդային ժամանակների գրաքննություն: Փաստորեն, հանձնաժողովը կարող է դառնալ ոչ թե պատմական ճշմարտության, այլ պաշտոնական պատմագիտական առասպելաբանության պաշտպանության գործիք:

Հանձնաժողովի նախագահ, ՌԴ նախագահի աշխատակազմի ղեկավար Ս.Նարիշկինը նշել է, որ հանձնաժողովը չի լինելու մի վերահսկող մարմին, որը ստիպելու է պատմաբաններին իրենց հետազոտություն-

ներից կոնյունկտուրային-քաղաքական հետեւություններ անել: Այն պետք է ուղղակի բացահայտի այն խեղաթուրված փաստերը, որոնք վնասում են Ռուսաստանի շահերին: «Այսօր կեղծվող պատմությունը թափանցում է հարեւան պետությունների ղեկավարների աշխատասենյակներ, որոնք փորձում են քաղաքական երկխոսության փոխարեն Ռուսաստանին բազմատեսակ պահանջներ ներկայացնել՝ տարածքային, քաղաքական, նյութական: Սա մենք թույլ տալ չենք կարող»:

Սա միակ նմանօրինակ ձեռնարկը չէ: ՌԴ Դումայում հայտնվել էր «ԽՍՀՄ նախկին հանրապետությունների տարածքում նացիզմի, նացիստական հանցագործների եւ նրանց օժանդակողների արդարացման հակազդեցության մասին» օրենքի նախագիծը, որով 3-5 տարի ժամկետով ազատազրկման պատժամիջոցներ կամ խոշոր դրամական տուգանք էր սահմանվում: Նախատեսվում էր ստեղծել հատուկ տրիբունալ, որը դիտարկելու է նախկին ԽՍՀՄ հանրապետություններում պրոնացիստական քաղաքականության դրսեւորումները: Նման հանցանքի դեպքում այլ երկրների քաղաքացիներին արգելվելու էր մուտք գործել Ռուսաստան, իսկ երկրների պարագայում նախատեսվում էր դեսպանների հեռացում, տրանսպորտային եւ տեղեկատվական կոմունիկացիաների մասնակի կամ ամբողջական շրջափակում, ինչպես նաեւ օտարերկրյա կազմակերպությունների եւ քաղաքացիների վտարում երկրից, ընդհուպ մինչեւ դիվանագիտական հարաբերությունների խզում:

Ստալինիզմի եւ նացիզմի հավասարեցում

Հունիսի 20-ին ԵԱՀԿ ԽՎ-ն ընդունեց «Բաժանված Եվրոպայի միավորումը՝ մարդու իրավունքների եւ քաղաքացիական ազատությունների պաշտպանությունը 21-րդ դարում» բանաձեւը՝ աջակցելով օգոստոսի 23-ը (Մոլոտով–Ռիբենտրոպ պակտի ստորագրման օրը) ստալինիզմի եւ նացիզմի զոհերի հիշատակի օր հայտարարելու ԵՄ նախաձեռնությանը:

Բանաձեւն ընդգծում է, որ 20-րդ դարում Եվրոպայի երկրները վերապրել են երկու տոտալիտար վարչակարգեր՝ նացիստական եւ ստալինյան, խախտվել են մարդու իրավունքներն ու ազատությունները, կատարվել են ռազմական եւ մարդկության դեմ հանցագործություններ: Փաստաթղթում նաեւ խոր անհանգստություն է արտահայտվում տոտալիտար վարչակարգերի փառաբանման, նացիստական եւ ստալինյան անցյալի հրապարակային մեծարման հետ կապված, զգուշացվում է ծայրահեղական, այդ թվում նաեւ նեոնացիստական ռեժիմների հնարավոր ուժեղացման վտանգի մասին: Այն կոչ է անում ԵԱՀԿ պետություններին բացել քաղաքական եւ պատմության արխիվները, պայքարել այլատյացության եւ ագրեսիվ ազգայնականության դեմ:

Մոսկվան դա անվանեց «վիրավորական հակառուսական քայլ» եւ «բռնություն պատմության հանդեպ»: Հուլիսի 3-ին ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ Անդրեյ Նեստերենկոն հայրարարեց. «Անթույլատրելի ենք համարում այն, որ ԵԱՀԿ ԽՎ բանաձեւում քաղաքական նպատակներով պատմության աղավաղման փորձ է արվում եւ դա չի նպաստում այս կազմակերպության մասնակից պետությունների միջեւ վստահության եւ համագործակցության միջավայրի ստեղծմանը»: Հնչեցին նաեւ ավելի կոշտ արձագանքներ՝ Արեւմուտքը ցանկանում է կասկածի տակ դնել ԽՍՀՄ հսկայական ավանդը Երկրորդ աշխարհամարտում տարած հաղթանակում: Ըստ պատմաբան Ն.Նարոչինսկայայի՝ «Ձարմանալի է, բայց նույնիսկ Սառը պատերազմի տարիներին ոչ ոք չէր ժխտում Խորհրդային Միության հսկայական դերը Երկրորդ աշխարհամարտի հաղթանակում: Միայն 70-ականներին է սկսվում պատերազմի պատմության խեղաթյուրումը»:

Հարցը, իրոք, հստակ քաղաքական ենթատեքստ ունի. նախ՝ այն մեկ հարթության վրա է դնում ստալինիզմը եւ նացիզմը, բացի այդ՝ թեմայի արժարժումը թույլ է տալիս նախկին ԽՍՀՄ երկրներից մի քանիսին՝ մասնավորապես Բալթյան երկրներին եւ Ուկրաինային, Ռուսաստանից պահանջել «հատուցում օկուպացման համար»:

Ռուսաստանը չի պատրաստվում համակերպվել այս բանաձեւի դրույթների հետ: Վերջին տասնամյակում այն ոչ միայն չկտրվեց իր խորհրդային անցյալից եւ մասնավորապես ստալինյան ժառանգությունից, այլեւ ընդհակառակը՝ վերականգնում է խորհրդային սիմվոլները, իսկ Ստալինը դպրոցական դասագրքերից մեկում բնորոշվում է իբրեւ «արդյունավետ մենեջեր»:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ժամանակակից պետությունները սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել հասարակության հիշողության վրա ազդեցությանը: Անցյալի որոշ դրվագների վրա կենտրոնացումը չափազանց կարեւոր է հասարակական ինքնության ձեւավորման համար ու անմիջական ազդեցություն է թողնում քաղաքական դիրքորոշումների եւ տեսակետների վրա: Դրանք տարբեր պետությունների մոտ նույն իրադարձության շուրջ տարբեր են լինում: Ամենավերջին օրինակը Պոլտավայի ճակատամարտի 300-ամյակին նվիրված լիովին տարբեր բովանդակությամբ տոնակատարություններն էին Ռուսաստանում եւ Ուկրաինայում:

Վերն ասվածը հուշում է, որ միգուցե ՀՀ-ում նույնպես կարիք կա ստեղծել մի կառույց, որը համակարգելու է Հայոց պատմության խեղաթյուրման փորձերին գնահատական եւ հակահարված տալու խնդիրները, քանի որ հավաքական հիշողության ձեւավորման, ինքնագնահատման եւ այլոց գնահատման հարցերն ազգային անվտանգության տիրույթում են գործում:

ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ***Արեստակես Սիմավորյան***

Հայտնի է, որ հայության էթնոկրոնական տարբեր հատվածների միջև փոխադարձ ընկալման խնդիրներ են առաջանում հատկապես այն ժամանակ, երբ կրոնական եւ ազգային պատկանելություն եզրերը չեն առանձնացվում: Մասնավորապես, այսպիսի խնդիրների ենթ ա կանատես լինում Ջավախքի կաթոլիկ եւ առաքելական հայերի մոտ. թեև ներկայում դրանք թույլ են արտահայտված, սակայն վերացված էլ չեն:

Ժամանակին (19–20-րդ դ. սկիզբ) Ջավախքի հայ կաթոլիկների եւ առաքելականների միջև միջդավանական «հակամարտություններ»-ը, կրոնական հողի վրա միմյանց ատելը սովորական երեւույթներ էին, որոնք, ցավոք, ուղղորդվում եւ հրահրվում էին նաեւ երկու եկեղեցիների ներկայացուցիչների կողմից: Խորհրդային շրջանն իր կրոնամերժ գաղափարախոսությամբ նպաստեց, որ այդ սառույցը հալվի:

Ուշագրավ է 2006 թվականին Արցախ այցելած հայր Անդրանիկ Կռանյանի հայտարարությունը, որ կաթոլիկ եւ առաքելական եկեղեցիները միացնող առիթները շատ ավելի են, քան բաժանողները, իսկ ամենաբարդ խնդիրը բուրոբովին էլ կրոնական չէ, այլ մարդկային. «Մեր աղոթքը նույնն է, նույնն են մեր պայքարը, վտանգները: Պարզապես մենք ընդունում ենք, որ հոգեւորականների գլխավոր պետը Պապն է եւ միլիոնավոր ժողովուրդների եկեղեցին պետք է մի գլուխ ունենա: Մենք ընդունում ենք, որ միջազգային պետը կարող է լինել հայ կամ օտարազգի, մանավանդ՝ Քրիստոսը հայ չէր: Իսկ առաքելական եկեղեցին գտնում է, որ ինքը միակ գլուխն է: Սա վարչական հարց է, եւ այն չպետք է մեզ իրար դեմ լարի»:

Առհասարակ, առաջնահերթ բառը, որով բնորոշվում է հայ կաթոլիկը Ջավախքի տարածքում, «ֆռանգ» պիտակավորումն է: Հայ կաթոլիկների համար վիրավորական երանգներ ունեն դրա կրճատ կամ լեզվական փոփոխման ենթարկված՝ «ֆլռռ» եւ «ֆլռիկ» ձեւերը: Իրենք՝ կաթոլիկ հայերը, նշում են, որ «ֆռանգ» բառն այնքան էլ վիրավորական չէ, քանի որ, ըստ ավանդության, իրենք այդպիսին են: Հետաքրքիր է, որ մեր այն հարցադրմանը, թե ինչ է նշանակում «ֆռանգ», նույնիսկ կրթություն չստացած մարդիկ պատասխանում էին, որ դրանք ազգային կրոնից օտարված հայեր են: Ժամանակին հայ առաքելականներին հայ կաթոլիկներն ասում էին «հերետիկոս». այս բառի օգտագործումը ժամանակակից Ջավախքի հայ կաթոլիկների կյանքում շատ աննշան է, իսկ

օգտագործողների մեծ մասն էլ հիմնականում տարեցներն են, որոնց մոտ այն հանդես է գալիս որպես ավանդված հիշողություն:

Երբեմն «Ֆռանգ» բառն այնքան ամուր է նստած հայ կաթոլիկների գիտակցությունում, որ առաքելականների մասին խոսելիս նրանց կոչում են հայեր, իսկ իրենց «Ֆռանգ»: Այստեղ «մեղքի» բաժին ունեն նաև հայ առաքելականները: Օրինակ՝ երբ հայ առաքելականն իմանում է, թե որ գյուղից է սերում կոնկրետ անձը, անմիջապես մատնանշում է նրա «Ֆռանգ» լինելը: Դա անհատի մեջ ձեւավորում է բարդություններ, ինչի հետեւանքով «Ֆռանգ»-ը ոչ թե ընկալվում է որպես կրոնական ուղղության հետեւորդ, այլ իբրև էթնիկ միավոր (ոչ հայ, պատահել է, որ նույնիսկ ընկալվել է ֆրանսիացի), ինչը հաճախ նպաստել է անհատի խորթացմանը հայկական միջավայրից: Այս երեւույթը ժամանակին իր տեղն ուներ Ախալցխայի, Ադիգենի, Ասպինձայի մի շարք գյուղերում, ինչի արդյունքում տեղի բնակչությունը մեկուսացավ հայկական միջավայրից եւ վրացացավ:

Ավելի քան հետաքրքիր են «պոչավոր» եւ «պոչը կտրած» արտահայտությունները, որոնցից առաջինը վերաբերում է առաքելականին, իսկ մյուսը՝ կաթոլիկ հային: Համեմատություններով միմյանց կոչելը եւս իր տեղն ունի ջավախահայերի կյանքում, բայց դրանք հազվադեպ են օգտագործվում, այն էլ՝ միմյանց վիրավորելու համար: Ավանդության ուժով պահպանված այսպիսի վերապրուկներն աստիճանաբար դուրս են մղվում առօրյա կյանքից:

Ջավախքի հայ կաթոլիկների մեջ կա եւս մեկ ուշագրավ երեւույթ, դա ներկաթոլիկական բաժանումն է, որով առանձնացրել են «լավ» եւ «վատ» կաթոլիկներին: Բաժանումը տեղի է ունեցել այս համայնքների ներսում, բայց դրա ձեւավորման վրա իր կնիքն է թողել նաև համայնքից դուրս գտնվող հայկական միջավայրը: Նրանք, ովքեր 1918 թվականին մարտնչել են տարածաշրջան ներխուժած թուրքական բանակի դեմ, ընդունվում են որպես «լավ ֆռանգ», իսկ մյուս հատվածը՝ «վատ»: Այսպիսի մոտեցումների արձագանքն առ այսօր պահպանվում է. մասնավորապես, Վարեւանի եւ Ալաստանի բնակիչներն առաքելական հայերի կողմից ստացել են «կատարյալ (խաս) ֆռանգ» անվանումը, իսկ մյուս հատվածը, ցավոք, ստացել է «վատ» պիտակը:

Դրան արժանացել են հատկապես նախկին թրքախոս՝ Կարտիկան, Բավրա, Խուլգունո գյուղերի հայ կաթոլիկները, ովքեր սեփական կյանքը փրկելու համար չեն փորձել դիմադրել թուրքերին, եւ դրանում մեծ է եղել թուրքերենի իմացության դերը, ինչը հնարավորինս զերծ է պահել նրանց կոտորածներից: Ի դեպ, այս գյուղերում ժամանակին հայերենն այն աստիճան է կորսված եղել, որ եկեղեցիներում օգտագործել են հայատառ թուրքերենով Աստվածաշունչ, ինչը նաև հաստատեց Հեշտիայի կաթոլիկ գյուղի քահանա Անտոն Անտոնյանը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում խուլզուհիների այն պնդումը, որ Ջակ եւ Վաչիան հայկական գյուղերի բնակիչները եղել են կաթոլիկներ, բայց այսօր հրաժարվում են ընդունել այդ փաստը: Վաչիան գյուղի պարագայում գուցե եւ հնարավոր է, քանի որ կաթոլիկ Վարեւան գյուղի բնակիչները միեւնույն վայրից են գաղթել՝ հետագայում առանձնանալով եւ հիմնելով իրենց բնակավայրերը: Սակայն պատմական որեւէ հիշատակության չենք հանդիպում, որը կցուցաներ այս երկու գյուղերի՝ նախկինում կաթոլիկ լինելու խուլզուհիների վարկածը:

Բավականին հետաքրքիր խումբ են այսպես կոչված «կաթոլիկ վրացիները»՝ նախկին հայ-կաթոլիկները, որոնք բնակվում են Ասպինձայի, Ախալցխայի եւ Ադիգենի շրջանների մեջ մտնող գյուղերում: Հայր Եանիցկին հավաստում է, որ այդ գյուղերի (Ասպինձայում՝ Խզաբավրա, Վարգավ, Ադիգենում՝ Արալ, Ուդե, Ախալցխայում՝ Իվլիտա գյուղերը) բնակիչները նախկին հայ կաթոլիկներ են, սակայն այսօր այդ մարդիկ ներկայանում են որպես վրացի կաթոլիկներ, միայն ազգանուններից է հասկացվում, որ հայեր են եղել, օրինակ Գալուստաշվիլի, Մխիթարաշվիլի: Բավական է ասել, որ այս գյուղերում գործում է լատինական ծես՝ վրացերենով: Սակայն ինչպես նշեց մեր զրուցակիցը, իրենք էթնիկ ծագման հարցերով աշխատում են չգբաղվել եւ ըմբռնումով են մոտենում պատմական ժամանակաշրջանում տեղի ունեցած երեւոյթներին:

Քանի որ Խզաբավրա եւ Վարգավ գյուղերը բավականին մոտ են գտնվում հայ կաթոլիկ գյուղերին (Ալաստան, Վարեւան, Տուրցխ), ապա նրանց հետ շփումները մշտապես սերտ են եղել: Վերոհիշյալ գյուղերի բնակիչները նշում էին, որ դրանք հայեր էին եւ մինչեւ 30-ական թվականները հայերեն էին խոսում, եւ նույնիսկ «Գովեցյալ Հիսուս» ողջույնի խոսքին զրաբարյան ծելով պատասխանում էին. «Եղիցի միշտ եւ հանապա»: Հայ կաթոլիկները սրանց կոչում են շուռ տված հայեր, ինչը ցույց է տալիս, որ այն վերաբերում է ազգային փոխակերպմանը եւ ոչ թե հավատափոխությանը:

Այս խմբի մոտ հայկական ինքնագիտակցությունը շատ ցածր է: Եթե իսլամացած հայերի սերունդների էթնիկ ինքնագիտակցության զարթոնքը կապված է ցեղասպանության տրավմատիկ հիշողությունների հետ եւ դեպի հայությանը դառնալու վառ գործոն է, ապա «վրացացած» կաթոլիկների պարագայում դժվար է ասել, թե որ գործոններն են, որ կարող են ազդեցիկ եւ որոշիչ լինել կորսված արմատներին վերադառնալու համար: Այս հարցը մեզանում ուսումնասիրված չէ եւ լուրջ հետազոտման կարիք ունի, հատկապես այսօր, երբ «վրաց կաթոլիկների» շրջանում ուղղափառացման քայլեր են կատարվում, ինչն ավելի է հեռացնելու նրանց առանց այն էլ երերուն ինքնագիտակցությունից:

Ինչ վերաբերում է Ջավախքի կաթոլիկ եւ առաքելական հայերի

փոխհարաբերություններին, ապա այսօր դրանք բավական սերտ են. նույնիսկ միմյանց եկեղեցի այցելությունները սովորական բնույթ են կրում:

Շատ կաթոլիկ հայեր կարծում են, որ կաթոլիկ լինելը քննարկման արժանի չէ, քանի որ իրենց նախնիներն այդպես են անհրաժեշտ համարել, ուրեմն դա խոհեմ քայլ է եղել, որը զերծ է պահել իրենց իսլամացումից եւ նպաստել հայ մնալուն:

Չայ կաթոլիկների հոգեւոր-եկեղեցական խնդիրները

Ջավախքի հայ կաթոլիկների ընդհանուր խնդիրները ծնունդ են առնում երկու ուղղությունից՝ Վրաստանի իշխանությունների կողմից, որի վրա լուրջ ազդեցություն ունի Վրաց ուղղափառ եկեղեցին, եւ հայ Կաթողիկեից:

Ընդհանրապես, Վրաստանում մինչ այժմ չլուծված թիվ մեկ խնդիրը եկեղեցիների կարգավիճակի հարցն է: Ոչ միայն առաքելական եւ կաթոլիկ եկեղեցիները իրավական կարգավիճակ չունեն, այլեւ մյուս դավանական եւ կրոնական ուղղությունները նույնպես: Բացի Վրաց ուղղափառ եկեղեցուց, մնացածների իրավական ներկայությունը փաստաթղթով ապահովված չէ: Վրաց ուղղափառ եկեղեցու դերն այնքան մեծ է Վրաստանում, որ ցանկացած կրոնական, այդ թվում եւ քրիստոնեական ուղղություն դիտվում է որպես աղանդ:

Անդրադառնալով հայ կաթոլիկների խնդիրներին՝ առանձնացնենք ամենազխավորը՝ հոգեւորականի բացակայությունը, ինչը հաստատեցին նաեւ համայնքները սպասարկող քահանաները:

Չայ կաթոլիկ հոգեւորականները հիմնականում պատրաստվում են Թբիլիսիում, Չալեպում, Լվովում, եւ դա որոշվում է իրենց եպիսկոպոսի կողմից, բայց շատ քչերին է հաջողվում ավարտին հասցնել ուսումը: Այսօր տասնչորս կաթոլիկ գյուղերին բաժին է ընկնում ընդամենը երեք հոգեւորական. զուգահեռ անցկացնելով հայ առաքելական գյուղերի հետ՝ նշենք, որ նրանք անհամեմատ ավելի վատ վիճակում են գտնվում, եւ հարյուրավոր առաքելական գյուղերին հովվություն են անում ընդամենը երկու-երեք հոգի:

Երբեմն առաքելական եկեղեցու սպասավորների բացակայության պատճառով գյուղերի բնակիչները հարսանեկան, կնունքի եւ այլ կարգի ծիսակատարություններ անցկացնելու համար դիմում են հայ կաթոլիկ եկեղեցիներին: Քանի որ երկու եկեղեցիների միջեւ կան որոշակի պայմանավորվածություններ, կաթոլիկ սպասավորներն ստիպված են լինում այդ մարդկանց ուղարկել Ախալքալաքի առաքելական եկեղեցի: Չայ Կաթողիկե եկեղեցու կողմից Ջավախքում, որպես կանոն, հավատափոխության, հավատադարձության ձեռնարկումներ չեն լինում, եւ դրա բուն պատճառը

արդի իրականությունում երկու եկեղեցիների միջև եղած առողջ հարաբերություններն են: Ինչպես հայր Եանիցկին էր ասում. «Նրանք չեն մտնում մեր գործերի մեջ, մենք՝ իրենց: Ամեն մեկը գիտի իր հոտի ոչխարներին եւ հոգ է տանում նրանց մասին»:

Եկեղեցական արարողությունները հիմնականում կատարվում են հայկական ծեսով, անգամ այն դեպքում, երբ սպասավորներն այլազգի են լինում: Ախալքալաքի եւ Նինոծմինդայի հայ կաթոլիկների ժողովրդապետ Անդրե Եանիցկին մեզ հետ զրույցում ասաց. «Շուրջ քսան տարի առաջ ինձ այստեղ ուղարկեց կարդինալը, քանի որ հայ ժողովուրդն այս կողմերում չունեն եպիսկոպոսներ, վարդապետներ: Կային, իհարկե, սփյուռքահայ կաթոլիկ քահանաներ, բայց իրավունք չունեին այստեղ գալու: Այն ժամանակ դա բավական դժվար հարց էր: Ես եկեղեցական արարողությունները սկսեցի կատարել լատինական ծեսով, հետո իրավունք խնդրեցի ընթերցումները կատարել հայերենով, եւ դրանից հետո պատարագները կատարվեցին հայկական ծեսով՝ գրաբարով, ինչպես որ առաքելական հայերի մոտ: Մինչեւ այսօր էլ ծեսերը, խորհուրդները կատարվում են հայկական ծեսով»: Հավելենք, որ յուրաքանչյուր գյուղում պատարագները կատարվում են շաբաթ եւ կիրակի օրերին, իսկ եկեղեցի այցելողների թիվը զգալիորեն ավելացել է:

Ախալքալաքի շրջանում կաթոլիկ եկեղեցիները տարեցտարի վերանորոգվում են: Այս աշխատանքների մեծ մասը ֆինանսական ծախսերի միջոցով կատարվում է գյուղերի բարերարների կողմից, կան նաեւ այլընտրանքային դրամական օժանդակություններ, որոնք ստացվում են հատկապես Գերմանիայից: Հայ կաթոլիկ գյուղերը նաեւ ստանում են տարբեր տեսակի օգնություններ, այն կատարվում է Վատիկանին ենթակա «Կարիտաս» կազմակերպության կողմից, որի բազմաթիվ մասնաճյուղեր գործում են հարյուրավոր երկրներում:

Կան համայնքներ, որոնք եկեղեցիներ չունեն, օրինակ Կաթնատու գյուղը, որտեղ համատեղ ապրում են թե՛ կաթոլիկ, թե՛ առաքելական հայերը, ընդ որում՝ եկեղեցի չունեն նաեւ վերջիններս: Նույն իրավիճակում են Ասփարա, Նոր Տամբովկա գյուղերը: Վատթար վիճակում են գտնվում հատկապես Նինոծմինդայի Ուջմանա եւ Թորիա գյուղերի եկեղեցիները:

Այսպիսով, կարելի է ասել, որ ազգային գիտակցությունն ու կրոնական պատկանելությունը հաճախ ներդաշնակ գոյատևել են Ջավախքի հայ կաթոլիկների կյանքում, որտեղ դավանանքը երկրորդական տեղ է ունեցել՝ հայկական գիտակցության համեմատ:

**ԱԶԳԱՅՆԱՄՈՒԼՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ**
Ռուբեն Մելքոնյան

Ազգայնամոլական տրամադրությունները եւ հակումները միշտ էլ լայն տարածում են ունեցել թուրքական հասարակության մեջ: Օսմանյան կայսրության բռնի թուրքացման քաղաքականությունը որդեգրվեց նաեւ Թուրքիայի Հանրապետության կողմից: Դրա հստակ գործադրման հետեւանքով է նաեւ, որ այսօր Թուրքիայում ազգային փոքրամասնությունների թիվը չի գերազանցում 100 հազարը: Տասնամյակներով վարած խտրական, մեծապետական քաղաքականությունը պատճառ դարձավ, որպեսզի հազարավոր ոչ մուսուլմաններ լքեն Թուրքիան: Վերջերս վարչապետ Էրդողանը քննադատեց իր իսկ երկրում կիրառված քաղաքականությունը փոքրամասնությունների նկատմամբ՝ դա որակելով ֆաշիստական, եւ ի պատասխան՝ արժանացավ ընդդիմության կոշտ քննադատությանը:

Թուրքիայում պանթուրքիզմի գաղափարախոսության կրողների ու իրականացնողների մեջ, առհասարակ, մեծ թիվ են կազմել քաղաքական գործիչները, պաշտոնյաները, «գիտնականները», «մտավորականները»: Օրինակ, Թուրքիայի վարչապետ, հետագայում նախագահ Իսմեթ Ինենյուն 1925թ. Անկարայում, «Թուրքական օջախների» համագումարում, իր ելույթի ժամանակ հայտարարել է. «Մենք բացահայտ ազգայնամուլներ ենք: Մենք ցանկացած զնով պետք է թուրքացնենք նրանց, ովքեր ապրում են մեր հայրենիքում»: Իսկ Թուրքիայի Հանրապետության արդարադատության նախարար Մահմութ Էսադը 1930թ. արտահայտել է հետեւյալ միտքը. «Մենք ապրում ենք ամենաազատ երկրում՝ Թուրքիայում, որտեղ թուրքը այս երկրի միակ տերն ու տիրակալն է: Մարդիկ, ովքեր ծագումով մաքուր թուրքեր չեն, այս երկրում ունեն միայն ստրուկ, ճորտ լինելու իրավունք»: Թուրքիայում հետզհետե աճող պանթուրքիզմի ալիքն ավելի մեծ թափ ստացավ հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմի եւ դրան նախորդած տարիներին: Բոլոր առումներով միատարր Թուրքիայի տեսլականը, ինչպես նաեւ պանթուրքական իդեալը՝ Թուրանը, սկսեց ավելի իրատեսական թվալ թուրք իշխանություններին: Միեւնույն ժամանակ, համաշխարհային պատերազմը փայլուն հնարավորություն էր ստեղծում էլ ավելի ազատ ու անկաշկանդ իրականացնել ազգային-

կրոնական փոքրամասնություններին հալածելու, ձուլելու քաղաքականությունը:

Կարելի է ասել, որ թուրքական հասարակության տարբեր շերտերում տարածված ազգայնամոլական դրսեւորումները ներկայումս ակտիվանալու միտում ունեն: Ավելորդ չէ նշել, որ վերջին համապետական ընտրություններում այս երեւոյթը վերածվեց կոնկրետ պատկերի, եւ այսօր Թուրքիայի խորհրդարանում երրորդ ուժը Ազգայնական շարժում կուսակցությունն է («Գորշ գայլերի» քաղաքական թելը): Այս տարվա մարտին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում նույնպես ԱՇԿ-ն աճ արձանագրեց:

Ներկայացնենք վերջին ժամանակներս Թուրքիայում արձանագրված ազգայնամոլության մի քանի դրսեւորումներ, որոնք սերտորեն կապված են հայ-թուրքական հարաբերությունների հետ:

Ամիսներ առաջ բավական աղմկահարույց արշավ սկսվեց Կեսարիայում, որն անմիջականորեն կապված էր Հայաստան – Թուրքիա ֆուտբոլային պատասխան խաղի հետ: Հայտնի է, որ ամենայն հավանականությամբ, հենց Թուրքիայի նախագահ Գյուլի ծննդավայր Կեսարիայում է տեղի ունենալու պատասխան հանդիպումը, որին կարող է մասնակցել նաեւ ՀՀ նախագահը: Թուրքական կրթական արհմիության Կեսարիայի մասնաճյուղն ապրիլին կազմակերպեց մի ակցիա, որն ուղղված էր հայ-թուրքական սահմանի բացման եւ ֆուտբոլային պատասխան հանդիպումը Կեսարիայում անցկացնելու դեմ: Արշավն իրականում ստորագրահավաք էր, որի կարգախոսն էր՝ «Եղբորս սպանողին չեն ցանկանում տեսնել իմ քաղաքում. Հայաստանի հետ սահմանը թող չբացվի»: Այս խորագիրը, ըստ կազմակերպիչների, կապվում էր հայ-ադրբեջանական կոնֆլիկտի հետ: Կազմակերպության նախագահ Ալի Իհսան Օզթուրքն այս որոշումը բացատրում էր նաեւ այն հանգամանքով, որ ՀՀ նախագահը գործունե մասնակցություն է ունեցել Արցախյան պատերազմին: Իրենց հավաքին ավելի լուրջ տեսք տալու համար հրավիրված էին անգամ «գիտնականներ», որոնցից, օրինակ՝ «Թուրքական օջախների» Կեսարիայի մասնաճյուղի ղեկավար, դոկտոր Աբդուլքադիր Յուվալը պատմական մի ակնարկ է արել եւ նշել, որ երբեք Հայաստանը որպես անկախ պետություն գոյություն չի ունեցել: Ինչէնէ, սկսված ստորագրահավաքը տեւել է 15 օր, եւ այդ ընթացքում հավաքվել է շուրջ 250 հազար ստորագրություն, որոնց հեղինակները դեմ են արտահայտվել հայ-թուրքական սահմանի բացմանը եւ Կեսարիայում ֆուտբոլային խաղի անցկացմանը: Ակցիայի վերջում կազմակերպիչները հայտարարել են, թե ստորագրություններն ուղղարկվելու են Թուրքիայի Ազգային մեծ ժողով: Ավելորդ չէ նշել, որ սույն ակցիան

ողջունել են Ադրբեջանում եւ կազմակերպիչներին շնորհակալական նամակ ուղարկել:

Այս տարվա սկզբին Եսփիշեհի քաղաքում Օսմանգազի մշակութային միությունների դաշնության նախագահ Նիյազի Չափան, ցանկանալով բողոք արտահայտել որոշ թուրք մտավորականների կազմակերպած «Ներողություն են խնդրում» նախաձեռնությանը, կազմակերպության մուտքի մոտ տեղադրել էր մի պաստառ, որի վրա գրված էր. «Չայերի եւ հրեաների մուտքն արգելված է, շների մուտքն ազատ է»: Այս բացահայտ ազգայնամոլական դրսևորումը բուռն հակազդեցություն առաջացրեց որոշակի շրջանակներում, ինչին հետեւեցին նաեւ իրավական գործընթացներ:

Հունիսին Խարբերդում (Ելյազիզ) անցկացվող «Խարբերդի ճարտարապետությունը անցյալից մինչեւ մեր օրերը» սիմպոզիումում նախատեսված է եղել նաեւ Խարբերդի հայկական ճարտարապետությանը վերաբերող բացիկների ցուցահանդես, որը նախաձեռնել է «Չայերը Թուրքիայում 100 տարի առաջ» բացիկների գրքի հեղինակ Օսման Քոքերը: Սակայն այդ ցուցահանդեսի անցկացումը կասեցվել է, եւ որպես դրա փաստարկ նշվել է այն, թե բացիկների վրա կան հայերեն գրառումներ: Ավելորդ չէ նշել, որ ցուցահանդեսի տապալման նախաձեռնողը գիտական կոչում ունեցող, Եփրատ համալսարանի պատմության ամբիոնի դոկտոր Յուքսել Արսլանթաշն է, որը մի քանի համախոհների հետ աղմուկ է բարձրացրել, թե բացիկների վրայի հայկական գրառումները բացահայտ հայամետ քարոզչություն են եւ նույնիսկ հարցրել է. «Ի՞նչ է, Խարբերդում հայեր են եղել»:

Հունիսին «Մեծ միասնություն» կուսակցության կրկին Կեսարիայի երիտասարդական թեւը պատրաստել եւ տարածել է իրենց պատկերացրած Թուրքիայի քարտեզը, որում ընդգրկված են Հյուսիսային Իրաքի մի հատվածը, Հալեպը, Նախիջեւանը, Բաթունը, Վառնան, Հունաստանի Սալոնիկ քաղաքը, Հռոդոս կղզին, Կիպրոսը, Իրանի մի մասը՝ Ուրմիա լճի կեսով: Հետաքրքիր է, որ Հայաստանն ըստ այդ քարտեզի հեղինակների ընդհանրապես գոյություն չունի, այլ ամբողջովին մտած է Թուրքիայի սահմանների մեջ: Տարածելով այդ քարտեզը՝ երիտասարդ ազգայնամոլները հայտարարել են, որ պայքարում են հենց այդ իդեալի համար եւ ոչնչացնելու են իրենց ճանապարհին ընկած բոլոր արգելքները: Նշենք, որ տարբեր ժամանակաշրջանների պանթուրանականներն իրենց ցնորքի աշխարհագրական ծավալման մասին տարբեր պատկերացումներ են ունեցել: Քարտեզի տակ կար նաեւ մի տող թուրքական հայտնի երգից, որը դարձել է ազգայնամոլների կարգախոս-սպառնալիքներից մեկը. «Մի

գիշեր հանկարծակի կարող ենք գալ»։ Ի դեպ, այս երգի բառերը բազմիցս հասցեագրվել են նաեւ հանգուցյալ Հրանտ Դինքին։ Հիշյալ քարտեզը եւ լուրը տեղ գտան թուրքական առաջատար թերթերում։ Հատկապես ուշագրավ են ընթերցողների մեկնաբանությունները, որոնք 99 տոկոսով դրական էին։ Սա խոսում է որոշակի ցուցանիշի մասին։ Հիշեցնենք նաեւ, որ Մեծ միասնություն կուսակցությունը Ազգայնական շարժում կուսակցությունից անջատված մասն է եւ կրկին դավանում է պանթուրքիստական գաղափարախոսությունը, իսկ նրա երիտասարդական թեւն ակտիվորեն աշխատում է այդ ուղղությամբ։ Բավական է նշել, որ Հրանտ Դինքին սպանող Օզյուն Սամասը եւ այդ գործով անցնող Յասին Հայալը եղել են հիշյալ կուսակցության երիտասարդական թեւի անդամներ։

Կարծում ենք՝ վերոնշյալ երեւոյթները եւ զարգացումները չպետք է անտեսել, քանի որ Թուրքիայում տեղի ունեցող որոշ դրական գործընթացների (որոնք ոչ միշտ են անկեղծ) կողքին կան նաեւ սույն իրողությունները։ Ավելորդ լավատեսությունը Թուրքիայի պարագայում տեղին չէ, քանի որ իրականությունը շատ հաճախ այլ է։ Հարկ ենք համարում նշել, որ վերջերս մի խումբ թուրք մտավորականների նախաձեռնած եւ բավական մեծ աղմուկ հանած «Ներողություն եմ խնդրում» ակցիան եւս պետք չէ միանշանակ ընդունել։ Ճիշտ է, այդ ստորագրահավաքին միացան շուրջ 30 հազար մարդիկ, որոնց մի մասի մղումներն, անշուշտ, ազնիվ էին, սակայն չպետք է անտեսել այն, որ դա նույնպես դարձավ թուրքական քաղաքականությանը նպաստող ակցիա, եւ ամենեւին էլ պատահական չէ, որ դրա շրջանակներում լայնորեն գործածվեց Մեծ եղեռն բառեզրը։ Այս ամենի էությունը լավագույնս բացահայտել է հենց այդ ակցիայի գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ հրապարակախոս Բասքըն Օրանը, որը խոսելով իրենց նախաձեռնության մասին՝ ասել է. «Մեծարգո վարչապետը (Էրդողանը) թող մեր ակցիայի համար աղոթի, քանի որ ամբողջ աշխարհի խորհրդարաններում անընդհատ (ցեղասպանության) օրինագծեր էին ընդունվում՝ դրանք կանգ կառնեն։ (Հայկական) սփյուռքը փափկեց։ Համաշխարհային մամուլը սկսեց չգործածել ցեղասպանություն բառը»։

ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՇՈՒՋ

Կարեն Վերանյան

Ադրբեջանական վերջին զարգացումներում մեծապես ընդլայնվել է արտաքին շահերի ներգրավվածությունը, ինչը, թերևս, պայմանավորված է վրաց-ռուսական պատերազմից հետո տարածաշրջանում ընթացող նոր վերադասավորումներով: Խնդիրն անհրաժեշտ է դիտարկել նաև տարածաշրջանային էներգետիկ զարգացումների, մասնավորապես՝ ադրբեջանական գազի մատակարարումների համատեքստում. այստեղ հատկապես վերջին ամիսներին լուրջ մրցակցություն է ընթանում արևմտյան երկրների ու Ռուսաստանի միջև: Ինչպես նշում են փորձագետներից շատերը, ադրբեջանական զարգացումներում արտաքին ուժերի ակտիվացումն ու շահերի բեռնացումը կորդի Ադրբեջանի իշխանություններին որոշակի հստակեցումներ մտցնել երկրի արտաքին քաղաքականությունում, ինչն առավել կանխատեսելի կդարձնի այն:

Շինոն Պերեսի այցն Ադրբեջան

Յունիսի 28–29-ին Իսրայելի նախագահ Շինոն Պերեսն այցելեց Ադրբեջան: Փորձագետների զգալի մասն այցը պատմական անվանեց այն առումով, որ Ադրբեջանի անկախացումից հետո առաջին անգամ պետական այցով այդ հանրապետություն է ժամանում Իսրայելի նախագահը: Այցելությունը, որի իրական շարժառիթների ու նպատակների շուրջ առայսօր չարունակվում են հասարակական-քաղաքական բանավեճերը, պայմանավորված էր ինչպես Իսրայել–Ադրբեջան երկկողմ հարաբերություններով, այնպես էլ տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացներով:

Վերջին մի քանի տարիներին Ադրբեջանի ու Իսրայելի միջև հաճախակիացած շփումների արդյունքում երկկողմ ռազմաքաղաքական համագործակցությունը սկսեց ձեռք բերել նոր որակներ՝ որոշակիորեն առանձնանալով Իսրայել–Թուրքիա–Ադրբեջան ռազմավարական դաշինքի ձեւաչափից: Կողմերի միջև համագործակցության զարգացմանը նպաստել է Իսրայելի ներքաղաքական դաշտում երկրի գործող արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանի ու նրա գլխավորած «Մեր տունը Իսրայելն է» կուսակցության դիրքերի ամրապնդումը: Լիբերմանի ու նրա կուսակցությունում գործող ադրբեջանամետ գործիչների ջանքերով

գործնական լուրջ քայլեր ձեռնարկվեցին երկու երկրների միջև համագործակցությունը որակապես նոր մակարդակի բերելու հարցում: Հենց այդ ժամանակաշրջանում (2007թ. ապրիլ) ձեւավորվեց Իսրայելի «Ադրբեջան – Իսրայել ասոցիացիան»:

Միաժամանակ, երկկողմ շփումների ակտիվացումը, Շ.Պերեսի այցելությունն Ադրբեջան տեղի են ունենում մի ժամանակահատվածում, երբ թուրք-իսրայելական հարաբերությունները գտնվում են սառեցման փուլում: Իսրայելական կողմը Ադրբեջանի հետ երկկողմանի համագործակցության խորացմամբ, թերեւս, փորձում է ադրբեջանական կողմին հնարավորինս ներգրավել իսրայելական ազդեցության գոտում՝ այդ թվում եւ պաշտոնական Անկարայի դեմ որպէս խաղաթուղթ օգտագործելու նկատառումով:

Իսրայելի նախագահի Ադրբեջան այցելությունը փորձագետների զգալի մասը պայմանավորում է նաեւ Իսրայել-Իրան հարաբերություններով եւ Իրանի շուրջ միջազգային զարգացումներով: Իրանի նախագահական ընտրություններից հետո, երբ երկիրը դեռ լիովին չի ապաքինվել ներքաղաքական ճգնաժամից, Իսրայելի համար լավ առիթ ներկայացավ ուժեղացնել ճնշումներն Իրանի նկատմամբ եւ վերջինիս հրահրել նոր սադրանքների: Փորձագետների կարծիքով, այդ այցելությունը փաստորեն հաստատեց, որ Ադրբեջանը պատրաստ է աջակցել իր տարածքից Իրանի դեմ Իսրայելի հատուկ ծառայությունների հետախուզական գործունեության վարման ակտիվացմանը:

Ադրբեջանական կողմն, իր հերթին, Իսրայելի նախագահի այցելությունը դիտում է Ադրբեջան-Իրան բավական հակասական հարաբերությունների հարթությունում եւ ի հակակշիռ հայ-իրանական բարձր մակարդակի համագործակցության: Ադրբեջանի ղեկավարությունն անհանգստացած է հայ-իրանական համագործակցության խորացմամբ, իսկ հայ-թուրքական երկխոսության հարցում՝ թուրք-ադրբեջանական անհամաձայնությունների պայմաններում, Իսրայելի հետ հարաբերությունների զարգացումը լավ հնարավորություն է՝ զսպելու Իրանի ներթափանցումը տարածաշրջան: Իսրայելի հետ կապերի զարգացումն ադրբեջանական կողմը դիտարկում է նաեւ թուրք-ադրբեջանական հարաբերությունների հարթությունում: Ալիեւը, մեծ շուքով ընդունելով Իսրայելի նախագահին, հաստատեց Բաքվի պատրաստակամությունն ու աջակցությունը տարածաշրջանում այլ արտաքին դերակատարների շարքում իսրայելական կողմի ներկայացվածության հարցում: Ի դեպ, թուրքական կողմը, այցելության հետ կապված, առայսօր զերծ է մնացել պաշտոնական մեկնաբանությունից, պասիվ կեցվածք են ընդունել նաեւ թուրքական լրատվամիջոցներն ու փորձագիտական հանրությունը:

Նոր տեղաշարժեր ռուս-ադրբեջանական հարաբերություններում

Վերջին շրջանում Ռուսաստանի ու Ադրբեջանի միջև հարաբերություններում առավել դինամիկ է համագործակցությունն էներգետիկ ոլորտում: 2008թ. ամռանից ակտիվացած՝ ադրբեջանական գազը Ռուսաստան ներմուծելու վերաբերյալ բանակցություններում ռուսական կողմը կարողացավ վերջնական պայմանավորվածություն ձեռք բերել ս.թ. հունիսի 29-ին ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի Ադրբեջան կատարած աշխատանքային երկօրյա այցելության ընթացքում: Ստորագրված պայմանագրով ադրբեջանական «Շահ Դենիզ» հանքավայրի առաջին փուլի շահագործումից ռուսական կողմը 2010թ. հունվարից 500 մլն խմ գազ կներմուծի (նախատեսվում է հետագայում ավելացնել մատակարարվող գազի ծավալները): Իհարկե, պաշտոնական Մոսկվան չի սահմանափակվի «Շահ Դենիզ» հանքավայրի առաջին փուլի շահագործման հարցում ձեռք բերած հաջողություններով. էներգետիկ ոլորտի մասնագետների կարծիքով՝ ադրբեջանական կողմի հետ համաձայնությունները լավ հնարավորություն ընձեռեցին ռուսական կողմին հեռանկարում «Շահ Դենիզ» հանքավայրի երկրորդ փուլի շահագործմանը մասնակցելու համար: «Շահ Դենիզ» հանքավայրի երկրորդ փուլի շահագործմամբ հետաքրքրված են նաև ԵՄ-ում ու Միացյալ Նահանգներում, ինչից եւ զգալիորեն կախված են հայտնի «Նաբուքո» գազատարի նախագծի գործարկման հնարավորությունները:

Ռուս-ադրբեջանական էներգետիկ համագործակցության զարգացմանը նպաստում են նաև հարավկովկասյան նոր միտումները, մասնավորապես, հայ-թուրքական հարաբերությունների բարելավման գործընթացը: Ռուսական կողմը կարողացավ օգտագործել հայ-թուրքական երկխոսության արդյունքում թուրք-ադրբեջանական անհամաձայնությունները եւ կարելուք քայլ արձանագրել Ադրբեջանի ուղղությամբ Մոսկվայի ազդեցության ընդլայնման հարցում: Ավելին, Թուրքիայի ու Ադրբեջանի միջև առկա որոշակի լարվածության հանգամանքներում պաշտոնական Անկարայի շահագրգռվածությունը՝ ներքաշել Ադրբեջանին «Նաբուքո» գազատարի նախագծի մեջ, կարծես հակառակ ազդեցությունն ունեցավ եւ նպաստեց Ռուսաստանի հետ այդ երկրի էներգետիկ համագործակցության խորացմանը: Դա է հաստատում նաև Իլհամ Ալիևի՝ ռուսական «ԻՏԱՌ-ՏԱՍՍ» տեղեկատվական գործակալությանը տված հարցազրույցը՝ նվիրված ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի՝ Ադրբեջան կատարած այցելությանն ու դրա արդյունքներին: Հարցազրույցում հիմնականում շեշտադրվում էին Ռուսաստանի ու Ադրբեջանի միջև ներկայիս

բարձր մակարդակի համագործակցությունը, ձեռք բերված գազային պայմանավորվածությունների կարելորությունը, իսկ «Նաբուք» գազատարի նախագծին առնչվող հարցերին Ալիեն արձագանքեց զուսպ եւ «իմիջիայլոց»՝ որոշակի վերապահումներով մոտենալով գազատարի կառուցման հեռանկարներին առհասարակ: Նրա խոսքերով՝ «Ադրբեջանը «Նաբուք» գազատարի ո՛չ նախաձեռնողն է, ո՛չ էլ մասնակիցը, համապատասխան առաջարկների դեպքում կարող է ներկայանալ զուտ որպես փոխադրող երկիր: Ադրբեջանը չի պատրաստվում ֆինանսներ ներդնել նախագծում, իսկ գազատարի կառուցման եւ լավ պայմանների պարագայում ադրբեջանական գազի մի մասը կարող է մատակարարվել այդ ուղղությամբ»:

Ռուս-ադրբեջանական գազային պայմանավորվածություններից հետո չհապաղեց Բաքվի իշխանությունների՝ ռուսական կողմին հասցեագրած հերթական ուղերձը, երբ հուլիսի սկզբներին վերանորոգման աշխատանքներից հետո Բաքվի Թագա-Պիր մզկիթի վերաբացման արարողությանը Իլիան Ալիելը հայտարարեց, թե «ռուս-ադրբեջանական հարաբերությունների զարգացումն ունի եւ կշարունակի ունենալ շատ կարելոր դեր ողջ Կովկասի խաղաղության ու անվտանգության ապահովման գործում»:

Ռուս-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում առանձնահատուկ նշանակություն պետք է տալ Իսրայելի նախագահի Ադրբեջան այցին եւ ձեռք բերված պայմանավորվածություններին: Գաղտնիք չէ, որ պաշտոնական Մոսկվան մշտապես կոշտ դիրքորոշում է ունեցել ԱՊՀ տարածքում Իսրայելի ակտիվության ցանկացած դրսեւորման հանդեպ: Ռուսական կողմը լրջորեն մտահոգված էր նաեւ Իսրայել-Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական համագործակցության խորացմամբ: Սակայն պաշտոնական Մոսկվան գրեթե անտեսեց Իսրայելի նախագահի Ադրբեջան այցելությունը: Ռուսական կողմի թվացյալ անտարբերությունը բավական անսպասելի է, եթե նկատի ունենանք այցելության արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները: Ադրբեջանական կողմը համաձայնության է եկել անօդաչու ինքնաթիռների արտադրության ոլորտում համաշխարհային առաջատար կազմակերպություններից մեկի՝ իսրայելական Aeronautics ընկերության հետ Ադրբեջանում հետախուզական ու մարտական անօդաչու ինքնաթիռների արտադրության գործարանի կառուցման շուրջ: Նման նախագծի իրագործումը, ըստ էության, պետք է իրապես անհանգստացներ Մոսկվային, քանզի վրաց-ռուսական պատերազմում վրացական կողմն իսրայելական անօդաչու ինքնաթիռներ կիրառեց: Բացի այդ, ադրբեջանական կողմը համաձայնության է եկել համագործակցել իսրայելական մեկ այլ առաջատար ընկերության՝ Elta Systems-ի հետ, որը մասնագիտացած է ռադարային արդիական տեխնոլոգիաներով զինված արբանյակային համակարգերի արտադրության ոլորտում: Վեր-

ջերս ընկերությունը թողարկեց նորագույն տեխնոլոգիաներով հագեցած TecSAR տեսակի արբանյակային համակարգ, որն արդյունավետ է աշխատում հատկապես լեռնային շրջաններում ռազմական գործողություններ վարելիս:

Ռուսաստանի կողմից Իսրայելի ու Ադրբեջանի երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության վերջին պայմանավորվածությունների անտեսումը պետք է պայմանավորել, թերևս, Ռուսաստանի ու Ադրբեջանի երկկողմ բանակցությունների (գազի ներմուծման վերաբերյալ) եւ վերջերս ստորագրված համաձայնագրի համատեքստում: Իսրայելի նախագահի այցի ու դրա արդյունքների նկատմամբ ռուսական կողմի դիրքորոշումը, ըստ էության, պայմանավորված է Ալիեւից սպասվող այլ ակնկալիքներով եւս, ինչպես, օրինակ, ադրբեջանական «Շահ Դենիզ» հանքավայրի երկրորդ փուլի շահագործման հարցում երկկողմ նախնական պայմանավորվածություններով: Մյուս կողմից, չի բացառվում, որ խնդիրն անուղակիորեն կապված լիներ հուլիսի սկզբին Օբամա–Մեդվեդեւ հանդիպման արդյունքում ձեռք բերված որոշ պայմանավորվածությունների եւ մասնավորապես՝ Արեւելյան Եվրոպայում ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգերի տեղակայմանը հնարավոր այլընտրանքային հարցերի հետ: Պատահական չէ, որ հանդիպմանը Մոսկվան կրկին առաջարկեց ամերիկյան կողմի հետ համատեղ շահագործել Ադրբեջանում տեղակայված Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանը: Հայտարարությանն անմիջապես հաջորդեց Ադրբեջանի պաշտոնական արձագանքը. Ալիեւը «Ռոսիա» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում հայտարարեց, որ «Ադրբեջանը դրական է գնահատում Գաբալայի ռադիոտեղորոշիչ կայանի շահագործումը՝ որպես միջազգային անվտանգության բաղադրիչ»:

Մյուս կողմից, Իսրայելի ու Ադրբեջանի միջեւ համագործակցության վերջին զարգացումները պաշտոնական Մոսկվան դիտարկում է նաեւ հարավկովկասյան տարածաշրջանային գործընթացների եւ, առաջին հերթին, Ռուսաստան–Թուրքիա մրցակցության հարթությունում: Ըստ փորձագետների՝ Իսրայել–Ադրբեջան ուղղակի շփումների խորացումը թուրքական կողմին որոշակիորեն դուրս է մղում տարածաշրջանային զարգացումներից: Որոշ տվյալներով՝ Ադրբեջանի հետ Իսրայելի շփումների ակտիվացմամբ իսրայելական կողմը ձգտում է անուղղակիորեն զարգացնել կապերը նաեւ Ռուսաստանի հետ, ինչը հրատապ է դարձել հատկապես Թուրքիայի հետ Իսրայելի լարված հարաբերությունների համատեքստում:

ԹԱԼԻՇՆԵՐՆ ԱՂՐԲԵՋԱՆՈՒՄ

Արաքս Փաշայան

Թալիշներն իրանական հնագույն ժողովուրդներից են, որոնք բնակվում են Ադրբեջանի հարավ-արևելյան՝ Իրանին սահմանամերձ կասպիական շրջաններում (Լենքորան, Լերիկ, Մասալին, Աստարին, Յարդմիլին), նաև՝ Բաքվում եւ հարակից շրջաններում, ինչպես նաև Իրանի հյուսիս-արևմտյան շրջաններում: Ադրբեջանի թալիշները շիադավան են, իսկ Իրանի թալիշները՝ սուննիադավան, նաև սուֆիական նակշբանդի ուղղության հետևորդներ:

Թալիշների հետ կապված կնճռոտ հարցերից մեկն այդ ժողովրդի թվաքանակի մասին տարաբնույթ տվյալներն են: Համաձայն 1999թ. Ադրբեջանում անցկացված մարդահամարի՝ նրանց թիվը 76.800 է, սակայն կան նաև այլ տվյալներ, որոնք ժողովրդագրական բարձր ցուցանիշ ունեցող թալիշների իրական թիվը համարում են 200.000-ից 500.000-ը: Նույն խնդիրը բնորոշ է Իրանի թալիշներին, որտեղ, ըստ պաշտոնական տվյալների, բնակվում են 112.000, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ ընդհուպ մինչև կես միլիոն թալիշներ:

XIX դարում ռուս-պարսկական պատերազմների եւ դրանց արդյունքում կնքված Գյուլիստանի (1813թ.) եւ Թուրքմենչայի (1828թ.) պայմանագրերով վերջ դրվեց թալիշական խանության գոյությանը, եւ թալիշաբնակ հյուսիսային շրջաններն անցան Ռուսաստանի վերահսկողությանը: XX դարում թալիշներն ինքնավար պետական միավորում ստեղծելու երկու անհաջող փորձ կատարեցին: Առաջինը 1919-ին էր, երբ թալիշներն ապստամբեցին մուսավաթական Ադրբեջանի դեմ եւ հռչակեցին Խորհրդային Սովետների Հանրապետությունը, որը երեք ամսվա կյանք ունեցավ: Ադրբեջանի Խորհրդայնացումից հետո թալիշաբնակ հյուսիսային շրջանները հայտնվեցին Խորհրդային Ադրբեջանի կազմում՝ վերջնականորեն բաժանելով Իրանի եւ Ադրբեջանի թալիշներին:

Ընդհուպ մինչև 1930-ականների վերջերը Ադրբեջանում թալիշների ազգային իրավունքները որոշակիորեն պաշտպանվում էին. նրանք սեփական լեզվով կրթություն ստանալու հնարավորություն ունեին: Սակայն այդ շրջանից ի վեր Ադրբեջանում էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող խտրականությունների հետեւանքով թալիշներն

աստիճանաբար սկսեցին ձուլվել: Ոչ թուրքական տարրի, այդ թվում՝ թալիշների նկատմամբ կիրառվող կոշտ քաղաքականության արդյունքում թալիշներն ըսկսեց աստիճանաբար դուրս մղվել՝ հոգուտ ադրբեջանե-րենի: Վտանգվեց նաեւ թալիշական ինքնության գաղափարը:

Թալիշական ազգային զարթոնքի հարցում մեծ նշանակություն ունեցավ 1993թ. հունիսին թալիշ մի խումբ ազգայնական գործիչների կողմից Ադրբեջանի կազմում Թալիշ-Մուղանական Ինքնավար Հանրապետության հռչակումը, որը նույնպես շատ կարճ կյանք ունեցավ՝ գոյատևելով մինչեւ օգոստոս ամիսը: Կենտրոնական իշխանության կողմից թալիշական հուզումները դաժանորեն ճնշվեցին, բազմաթիվ ակտիվիստներ, այդ թվում՝ շարժման ղեկավարները, հայտնվեցին բանտերում եւ ընդհատակում, շատերը տարագրվեցին: Իշխանությունների ձեռնարկած քայլերը նաեւ հոգեբանական նշանակություն ունեցան՝ թալիշական շրջաններում ստեղծելով վախի մթնոլորտ: Թալիշական էթնոսի եւ թալիշական ազգային խնդիրների գոյության փաստն Ադրբեջանում այլեւս փակուղի մտավ:

Տասնամյակների ընթացքում իրականացված հետեւողական քայլերի արդյունքում թալիշական շրջանակներում ուսուցման եւ հաղորդակցության հիմնական լեզուն դարձավ ադրբեջաներենը: Թալիշներն չպահպանեց իր նշանակությունը հիմնականում առանձին գյուղական շրջաններում՝ որպես ընտանեկան շփման միջոց:

Հատկանշական է, որ Ադրբեջանում թալիշներն ունեցան հրատարակություններ գրեթե չկան, հազվադեպ դարձած թալիշական մամուլը եւ գրականությունը հիմնականում հրատարակվում են ադրբեջաներենով: Գոյություն ունի թալիշներն ունեցող 15 րոպե տեւողությամբ ռադիոէթեր:

Միեւնույն ժամանակ, թալիշների թուրքացման գործընթացը զուգորդվեց Ադրբեջանի նոր պատմության համար ոչ ցանկալի հնագույն թալիշական տեղանունների անվանափոխությամբ կամ թուրքացմամբ: Պատահական չէ, որ Ադրբեջանի պատմության դասագրքերում թալիշների մասին չի խոսվում, նրանք, ընդհանուր առմամբ, դիտարկվում են որպես Լենքորանի բնակիչներ կամ Լենքորանի մշակույթի կրողներ:

Թալիշների նկատմամբ խտրականության մեկ այլ ապացույց է այն փաստը, որ թալիշաբնակ շրջաններում պաշտոնավարում են ոչ թե թալիշներ, այլ տարբեր շրջաններից, հատկապես Նախիջեւանից ժամանած մարդիկ: Ջուզահեռաբար, թալիշական ազգային շրջաններում տեղի է ունենում ադրբեջանցիների եւ քրդերի վերաբնակեցում, իսկ առկա սոցիալ-տնտեսական ահագնացող դժվարությունների պայմաններում թալիշ երիտասարդների մի զգալի մասը ստիպված է արտագաղթել: Առկա միտումները տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը փոխելու եւ

թալիշական խնդրից վերջնականորեն ձերբազատվելու հստակ նպատակ են հետապնդում:

Ադրբեջանի հատուկ ծառայությունների համոզմամբ՝ թալիշական ազգային շարժումն իր հիմքում անջատողական է, միտված Ադրբեջանից եւ Իրանից անջատված տարածքների վրա անկախ թալիշական պետության ստեղծմանը: Մինչդեռ իրականում թալիշ գործիչների մեծ մասը հակված է խոսել ոչ թե անկախության կամ ինքնավարության, այլ Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում թալիշների ինտեգրման, Բաքվի կողմից նրանց՝ որպես առանձին էթնոս ճանաչելու մասին: Թալիշները ցանկանում են ունենալ հավասար իրավունքներ, կրթություն ստանալ մայրենի լեզվով, չհետապնդվել ազգային պատկանելության համար: Այդ տեսանկյունից հետաքրքիր դիտարկում է արել վտարանդիության մեջ գտնվող թալիշ ազգային գործիչ Ալիքրամ Յունատովը, որը 2009-ին այցելել էր Ռուսաստան: Ռուս լրագրող Յանա Ամելինայի հետ զրույցի ժամանակ նա առաջ էր քաշել թալիշների ինքնակազմակերպվելու եւ ինքնավարությունը վերականգնելու անհրաժեշտությունը: Ա.Յունատովի համոզմամբ՝ միայն Ադրբեջանի երբեւէ ժողովրդավարացումը (ինչը հազիվ թե հավանական է) կարող է օգնել թալիշներին՝ վերականգնելու իրենց ազգային իրավունքները:

Առանձին տեսակետների համաձայն՝ չնայած վարչակարգի դիմակայությանը, թալիշական ազգային շարժումն իր մեջ ինքնակազմակերպվելու ուժ երբեւէ կգտնի, անշուշտ, եթե դա այլեւս ժամանակավրեպ չլինի: Չնայած ժամանակ առ ժամանակ ընդհատակում գտնվող թալիշական ազգային շարժման անդամները հայտարարություններ են անում, սակայն դրանք, հասկանալի պատճառներով, որոշակիորեն կաշկանդված են: Այդ իմաստով՝ թալիշական օրակարգերը բավական կենսունակ են արտերկրում (ինչը նկատի է առնում հիմնականում Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Եվրոպական որոշ երկրներ), որտեղ գործում են թալիշական կազմակերպություններ: Դրանք առաջ են քաշում թալիշական ազգային իրավունքների վերականգնումը տարբեր ձեւաչափերում՝ հիմնականում Ադրբեջանի կազմում: Հատկանշական է, որ թե՛ սփյուռքում եւ թե՛ Ադրբեջանում բնակվող թալիշների շրջանում տիրապետող են հիմնականում երկու կողմնորոշումներ՝ ռուսամետությունն ու իրանամետությունը: Կան նաեւ բացառապես սեփական ժողովրդի ուժերին ապավինող շրջանակներ, իսկ մարդու իրավունքների պաշտպանության հարցում Արեւմուտքի աջակցության ակնկալիքներն այլեւս սպառել են իրենց: Ամեն պարագայում, թալիշական սփյուռքը միակ ասպարեզն է ազգային զարթոնքի համար:

Առանձին հետազոտողներ նշում են, որ Ադրբեջանի էթնիկ փոքրամասնությունների շրջանում նկատվում են նաեւ իսլամական վերածնունդի շարժումներ: Ինչ վերաբերում է թալիշական շրջաններին, ապա դրանք գրեթե զերծ են Իրանի կրոնական ազդեցությունից, իսլամական արմատական գաղափարախոսություններից, չնայած իսլամի նկատմամբ կա հետաքրքրության աճ: Տեղի հոգեւորականները ենթարկվում են Ալլահ-շյուքյուր Փաշազադեին, չնայած իրենց կրոնական կենտրոնը համարում են Իրանը:

Հատկանշական է, որ Ադրբեջանի իշխանությունների մոտեցումները թալիշական խնդիրների նկատմամբ ժամանակի ընթացքում նորանոր՝ նաեւ անսպասելի դրսևորումներ են ձեռք բերում: Ասվածի ապացույցն է 2007թ. փետրվարին թալիշ երկու հայտնի մտավորականների բանտարկությունը՝ Իրանի օգտին լրտեսություն անելու մեղադրանքով: Նրանցից մեկը Թալիշական մշակութային կենտրոնի տնօրեն, «Թուլիշի սյադո» (Թալիշների ծայն) թերթի խմբագիր, թալիշագետ Նովրուզալի Մամեդովն է, մյուսը՝ նույն կենտրոնի քարտուղար, արեւելագետ-իրանագետ Էլման Գուլիեւը: Պետությանը դավաճանելու մեղադրանքով Ն.Մամեդովն ազատազրկվել է տասը, իսկ Է.Գուլիեւը՝ վեց տարով: Հետաքրքիր է, որ վերջիններս մշտապես աչքի են ընկել իշխանության նկատմամբ լոյալ վերաբերմունքով:

Թալիշ մտավորականների ձերբակալությունն Ադրբեջանում անարձագանք չմնաց: Փաստը դատապարտող հայտարարություն տարածեցին Բաքվի խաղաղության եւ ժողովրդավարության ինստիտուտը, առանձին իրավապաշտպան կառույցներ, ովքեր Ն.Մամեդովին ճանաչեցին իբրեւ քաղբանտարկյալ: 2007-ին ԱՄՆ-ի կողմից Իրանի վրա հնարավոր հարձակման մասին շրջանառվող լուրերը թույլ տվեցին առանձին վերլուծաբանների, այդ թվում՝ Ն.Մամեդովի իրավապաշտպան Հիլալ Մամեդովին պնդել, որ նման քայլով Ադրբեջանի իշխանությունները ձգտում են ի ցույց դնել ԱՄՆ-ին, որ սեփական երկրում չեզոքացնում են իրանական հետաքրքրությունները պաշտպանող ուժերին: Մամեդովի համոզմամբ՝ դրանով Ադրբեջանի հատուկ ծառայությունները պրոֆիլակտիկ աշխատանք են տանում, որպեսզի էթնիկ փոքրամասնությունները չպայքարեն իրենց իրավունքների համար: Թալիշական խնդիրներն Ադրբեջանում շոշափում են նաեւ ուժային տարբեր կենտրոնների հետաքրքրությունները, առաջին հերթին՝ Իրանի եւ Ռուսաստանի: Իրանը Թալիշստանը, իսկ ավելի ճիշտ, Իրանից ժամանակին անջատված հյուսիսային Թալիշստանը, դիտարկում է որպես իրանական աշխարհի բաղկացուցիչ: Պատահական չէ, որ Ադրբեջանի անկախացումից ի վեր Թեհրանը թալիշական

շրջաններում իրականացրել է գործուն քարոզչություն՝ իր քաղաքական եւ կրոնական ազդեցությունը տարածելու համար: Միեւնույն ժամանակ, Իրանը մշտապես զգուշանում է սեփական երկրում թալիշական գործոնի ակտիվացումից:

Թե՛ թալիշներին եւ թե՛ Ադրբեջանի էթնիկ այլ փոքրամասնություններին առնչվող խնդիրները կարելու գործոն են Ռուսաստանի համար՝ Ադրբեջանի վրա ճնշումներ բանեցնելու տեսանկյունից: Չատկանշական է, որ Ռուսաստանում են ապաստան գտել եւ գտնում թալիշական ազգային շարժման բազմաթիվ գործիչներ, այստեղ կան թալիշ աշխատանքային էմիգրանտներ, եւ վերջապես՝ թալիշական սփյուռք:

Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանն ըստ էության դարձել է թալիշական շարժման ինտելեկտուալ եւ տեղեկատվական հովանոցը, այն հրապարակայնորեն չի արձագանքում թալիշական խնդիրներին: Այս հանգամանքը շատ ցավագին է ընդունվում թալիշների կողմից, որոնց կարծիքով՝ Ռուսաստանը պատմականորեն պատասխանատվություն ունի թալիշական խնդիրների նկատմամբ: Ինչ վերաբերում է Արեւմուտքին, ապա վերջինս ներկա փուլում հատուկ հետաքրքրություն չի ցուցաբերում իրանական ծագում ունեցող թալիշներին աջակցելու համար:

Թալիշական շարժման հեռանկարները մշուշոտ են: Տեսականորեն, թալիշական ազգային շարժումը, դաշնակիցներ եւ անհրաժեշտ ռեսուրսներ ձեռք բերելու պարագայում, կարող է աշխուժանալ: Թալիշ առանձին գործիչներ հեռանկարում չեն բացառում նաեւ զինված պայքարի հնարավորությունը:

Էթնիկ փոքրամասնությունների խնդիրներն Ադրբեջանի ամենացավոտ եւ երկիրը խոցելի դարձնող հարցերից են, որոնք շարունակում են գոյություն ունենալ՝ ժամանակ առ ժամանակ ընդունելով դրսեւորման նորանոր ձեւեր: Միեւնույն ժամանակ, թալիշների օրինակը մեկ անգամ եւս ի ցույց է դնում, որ էթնիկ փոքրամասնություններն Ադրբեջանում հեռանկար չունեն:

ՀԵՏԸՆՏՐՎԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իրանում նախագահական ընտրություններին հաջորդած զարգացումները մեծ արձագանք ստացան միջազգային քաղաքական եւ լրատվական շրջանակներում: Սակավ չէին կարծիքներն այն մասին, որ Իրանը գտնվում է նոր հեղափոխության նախաշեմին: Մինչդեռ վերջին զարգացումները խոսում են այն մասին, որ իրավիճակը երկրում վերահսկվում է իշխանությունների կողմից:

Իրանում հետընտրական զարգացումների հիմնական առանձնահատկությունն այն է, որ զանգվածային ցույցերը եւ արյունոտ բախումները ցուցարարների ու անվտանգության ուժերի միջեւ չհանգեցրին ընդդիմության եւ նրան պաշտպանող հասարակության մի մեծ հատվածի շրջանում հակահամակարգային նպատակների ձեւավորման: Ինչպես ցույցերի առաջին օրերին, այնպես էլ հետագայում՝ ցուցարարների հիմնական պահանջը ոչ թե առանցքային քաղաքական փոփոխություններ իրականացնելն էր, այլ նոր նախագահական ընտրությունները:

Հունիսի 20-ին Միր-Հոսեյն Մուսավիին հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որով կոչ արեց իրեն պաշտպանող ցուցարարներին զերծ մնալ բռնություններից եւ շարունակել ցույցերը միայն խաղաղ ճանապարհով: Նա իր կոչում, եւս մեկ անգամ ընդգծելով, որ հեղափոխական չէ, որպես իր գործողությունների հիմնական ուղենիշ նշեց իսլամական հեղափոխության խորհուրդն ու դրա նպատակները: Հաջորդ օրը Մուսավիի անունից հայտարարություն տարածվեց, ինչն, ի դեպ, հետագայում չհաստատվեց, որ ընդդիմությունը մարմնավորող Մուսավիին պատրաստ է որպես շահիդ սեփական կյանքը զոհաբերել հանուն ցուցարարների եւ արդարության:

Իրանում ծավալված ներքաղաքական պայքարը հունիսի 24-ից՝ փողոցային ցույցերի դադարեցումից հետո, տեղափոխվեց ստվերային դաշտ, որտեղ հիմնական գործող անձինք ոչ թե փողոց դուրս եկած երիտասարդներն էին, այլ իրանական վերնախավի տարբեր բեւեռները: Հունիսի 26-ին Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադի կազմակերպած՝ մեջլիսի անդամների ամենամյա ընդունելությունը ցույց տվեց, թե որքան է խորացել գործող նախագահի նկատմամբ իրանական քաղաքական

վերնախավի մի մեծ հատվածի դժգոհությունը: Ընդունելության հրավերն ընդունեցին եւ հանդիպմանը մասնակցեցին Իրանի խորհրդարանի 290 պատգամավորներից միայն 105-ը: Հանդիպմանը, որի ընթացքում հնչեցվում էին շնորհավորանքներ Մ.Ահմադինեժադի վերընտրման կապակցությամբ, չմասնակցեց նաեւ խորհրդարանի նախագահ, պահպանողականների ճամբարի հիմնական առաջնորդներից մեկը համարվող Ա.Լարիջանին: Նշենք, որ 290 պատգամավորներից բաղկացած խորհրդարանում այսպես կոչված «բարեփոխիչներն» ունեն ընդամենը 76 պատգամավոր, այն դեպքում, երբ ընդունելությանը տարբեր պատճառներով հրաժարվել են մասնակցել 185 պատգամավորներ: Սա խոսում է այն մասին, որ գործող նախագահի դեմ ձեւավորված ընդդիմության բեւեռը կազմված է տարբեր թւերի ներկայացուցիչներից:

Այստեղ ուշադրության է արժանի եւս մեկ կարեւոր փաստ: Հունիսի 25-ին Իրանի խորհրդարան՝ պատգամավորական խմբակցությունների ղեկավարների հետ հանդիպման էին եկել Մ.Յ. Մուսավին եւ Փորձագետների վեհաժողովի նախագահ Ա.Ա. Հաշեմի-Ռաֆսանջանին: Առաջին տեղեկությունն այս այցի եւ տեղի ունեցած հանդիպումների մասին հաղորդեցին Արեւմուտքում գործող իրանական ընդդիմադիր գործակալությունները, իսկ պաշտոնական հավաստիացումը Հաշեմի-Ռաֆսանջանի կողմից ստացվեց միայն մեկ շաբաթ անց:

Նշենք, որ հանդիպումը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ համաշխարհային լրատվամիջոցները տարբեր տեղեկություններ էին տարածում Մուսավիի մասին. իբր նա ձերբակալվել է, գտնվում է տնային կալանքի տակ եւն: Սակայն ակնհայտ է, որ Մ.Ահմադինեժադի հակառակորդը բավական ազատ քաղաքական գործունեությամբ է զբաղվում, իսկ նրա ստվերում գտնվելը, հավանաբար, պայմանավորված է այն հանգամանքով, որ Մուսավին ցանկանում է կտրել ցուցարարների ագրեսիվ հատվածի հետ իրեն կապող թելը՝ դրանով իսկ խուսափելով անկարգությունների կազմակերպման մեջ մեղադրված լինելուց: Նման վարվելաձեւ է դրսևորում նաեւ Հաշեմի-Ռաֆսանջանին, ով հունիսի 29-ին հայտարարություն տարածեց այն մասին, թե անկարգությունները դավադրություն են Իրանի պետության եւ ժողովրդի նկատմամբ, իսկ դրանց իսկական կազմակերպիչները «ժողովրդից չեն»:

Մեկ շաբաթ անց Հաշեմի-Ռաֆսանջանին կոչ արեց ազատ արձակել բոլոր նրանց, ովքեր կապ չունեն դավադրության կազմակերպման հետ: Նշենք, որ հունիսի երկրորդ կեսին, ըստ իրանական ոստիկանության պաշտոնական տեղեկատվության, անկարգությունների կազմակերպման եւ իրականացման մեղադրանքով ձերբակալվել է 1000-ից ավելի մարդ:

Թե՛ Մուսավիի եւ թե՛ Յաշեմի-Ռաֆսանջանիի ցանկությունը՝ խզել կապը ցուցարարների ակտիվ զանգվածի հետ, ամենայն հավանականությամբ արդյունք է այն գիտակցության, թե փողոցային պայքարը սպառել է իրեն: Իշխանություններն իրենց հերթին բավական կարելուր քայլ են արել Մուսավիի եւ նրա քաղաքական կողմնակիցների նկատմամբ՝ որպես պաշտոնական կարծիք եւ գնահատական տարածելով այն դատողությունը, թե ցույցերի եւ սպանությունների հետեւում կանգնած են արեւմտյան ուժերը: Թե ինչպիսին է Արեւմուտքի մասնակցությունը Իրանում տեղ գտած քաղաքական ճգնաժամին, այս դեպքում կարելուր չէ: Առաջնային կարելուր է ներկայացնում այն փաստը, որ Արեւմուտքի հետ կապված այս վարկածը ձեռնադրել է թե՛ իշխանություններին, թե՛ Մուսավիին՝ թույլ տալով երկուսին էլ խուսափել իրենց բաժին պատասխանատվությունից:

Նշենք, որ հակաարեւմտյան եւ ընդհանրապես իսլամիստական բնույթի քարոզչությունն Իրանում վերջին շաբաթների ընթացքում աճել է: Այն ուղղված է հասարակական որոշակի համախմբվածության ստեղծմանը եւ ուշադրությունը շեղելուն: Սակայն այն, որոշ դեպքերում, սկսում է հիշեցնել 30-ամյա հնության հետհեղափոխական իրանական քարոզչությունը, որն ուղղված էր բոլոր նրանց դեմ, ովքեր խախտում էին մահմեդականների շահերը: Այսպես, օրինակ, հուլիսի 12-ին հեղինակավոր եւ ազդեցիկ մեծ այաթուլաներ Մ.Շիրազին եւ Լ.Գոլփայգային կոչ արեցին իրանական կառավարությանը՝ չլռել Չինաստանի կողմից ուղղուր մահմեդական բնակչության դեմ իրականացվող գործողությունների առիթով: Սա այն պայմաններում, երբ Չինաստանը Իրանի կարելուրագույն քաղաքական եւ տնտեսական գործընկերն է հանդիսանում: Նույն օրը Իրանի փոխարտգործնախարար Մ.Սանային հայտարարեց, որ ԱՄՆ կառավարությունը ճնշում է գործադրում Յարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի պետությունների վրա՝ պահանջելով դադարեցնել տնտեսական եւ քաղաքական հարաբերություններն Իրանի հետ: Ինչ վերաբերում է Իրաքին եւ Աֆղանստանին, ապա ներքաղաքական ճգնաժամից հետո Իրանի դիրքորոշումն այս երկու երկրներում ամերիկյան ներկայության վերաբերյալ միանգամից կարծրացավ: Միեւնույն ժամանակ, վերջին մի քանի շաբաթվա ընթացքում կտրուկ ավելացան գրոհայինների հարձակումներն Իրաքում եւ Աֆղանստանում տեղակայված ամերիկյան ուժերի վրա, ահաբեկչության ալիքը նոր ծավալում ստացավ:

Միեւնույն ժամանակ, ներքաղաքական անկայունության պայմաններում աճել է անհանգստությունը Իրանի ազգային եւ կրոնական փոքրամասնությունների բնակչության շրջաններում: Խոսքն առաջին հերթին Բելուջիստանի մասին է, որի բնակչության մեծ մասն անգամ պաշտո-

նական տվյալներով քվեարկել է Մ.Յ. Մուսավիի օգտին՝ հույս ունենալով ազատվել Մ.Ահմադինեժադի շիա-ծայրահեղական վարչախմբից: Սուրհմի բելուջներով բնակեցված իրանական այս տարածքում ընտրություններից հետո արդեն երեք խոշոր ահաբեկչական ակտեր են իրականացվել, որոնց արդյունքում 30-ից ավելի մարդ է զոհվել: Բացառված չէ, որ այս անհանգստությունների կազմակերպման մեջ ակտիվ դեր են ունեցել այլ պետությունները, սակայն իրանական ներքին կրոնական քաղաքականության մեջ վերջին տարիներին ամրապնդված հակասուննիականությունը պարարտ հող է ստեղծել արտաքին միջամտության համար:

Վերադառնալով Իրանում բուն ներքաղաքական զարգացումներին՝ պետք է նշել, որ մոտակա շրջանում իշխանությունները հասարակությանն այսպես թե այնպես պետք է ներկայացնեն բախումների մեղավորների եւ դրանց քաղաքական կազմակերպիչների անունները: Վերջին շրջանում իրանական պետական լրատվամիջոցներում ակտիվացել են հրապարակումները «Մոջահեդդինե Խալք» կազմակերպության եւ նրա՝ բրիտանական կառավարության հետ ունեցած կապերի մասին: Ամենայն հավանականությամբ հենց «Մոջահեդդինե Խալքը» եւ բրիտանա-ամերիկյան իշխանությունները կներկայացվեն որպես անհանգստությունների եւ բախումների կազմակերպիչներ, ինչը թե՛ իրանական ղեկավարության եւ թե՛ Մուսավիի քաղաքական թիմին թույլ կտա մասնակիորեն խուսափել հասարակության առջեւ պատասխանատվությունից:

Այսպես թե այնպես, քաղաքական թե՛ պայքարն Իրանում մոտենում է մարման:

ԻՐԱՆ–ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Արտաշես Տեր-Հարությունյան

Ամերիկյան նոր վարչակազմը պայմանավորվածությունների շարք է սկսել աշխարհում՝ նպատակ ունենալով փոխել այն անբարենպաստ իրավիճակը, որն ԱՄՆ արտաքին քաղաքականության համար ստեղծվել էր Բուշ-կրտսերի նախագահության վերջին շրջանում: Ընդհանուր առմամբ, հայտնի է եվրոպական ազդեցիկ երկրների, Ռուսաստանի, Թուրքիայի եւ մի շարք այլ ուժի կենտրոնների ուղղությամբ Օբամայի թիմի նախաձեռնությունների մասին: Սակայն Սպիտակ տան վարչակազմի փոփոխությունից հետո անցել է արդեն կես տարի, բայց այդպես էլ ի մի չեն բերվում այն առանցքային դրույթները, որոնք հիմք են ծառայելու ամերիկյան արտաքին քաղաքականության համար էական հանդիսացող իրանական ուղղությունում: Օբամայի վարչակազմը դեռ շարունակում է այն բանակցությունները, որոնք սկիզբ էին առել Բուշ-կրտսերի նախագահության վերջում, սակայն այդ բանակցությունները կա՛մ պետք է տանեն որոշակի պայմանավորվածությունների, կա՛մ չեղյալ են հայտարարվելու: Դրանք չեն կարող անվերջ շարունակվել, որովհետեւ ամերիկյան կողմը համարում է, թե այս պայմաններում ժամանակն աշխատում է իր դեմ, իսկ Թեհրանում էլ գտնում են, որ Վաշինգտոնի հետ լավագույնս պայմանավորվելու ժամանակահատվածն, ամեն դեպքում, սահմանափակ է:

Հուլիսի 9-ին հայտնի դարձավ, որ Իրաքում գործող ամերիկյան ռազմական հրամանատարությունը Բաղդադի կենտրոնական իշխանություններին է հանձնել դեռեւս 2007թ. հունվարին հյուսիսիրաքյան Էրբիլ քաղաքում գերեվարված իրանցի հինգ դիվանագետներին: Նշվում էր, որ առաջիկա օրերին վերջիններս ազատ են արձակվելու եւ ներկայանալու են Բաղդադում գտնվող Իրանի դեսպանատուն: Անցած երկուսուկես տարում իրանցի դիվանագետների հարցը չէր իջնում իրանա-ամերիկյան բանակցությունների օրակարգից, եւ 2007թ. նոյեմբերին ամերիկյան հրամանատարությունն անգամ հայտարարեց, որ պատրաստվում է ազատ արձակել իրանցիներին, սակայն այդ անելու համար պահանջվեց եւս քսան ամիս:

Անշուշտ, իրանցի հինգ դիվանագետների հարցն այդքան էլ էական չէ ամերիկա-իրանական բանակցությունների օրակարգում, սակայն այն ցուցիչ է, որ բանակցությունները ոչ միայն ընթացքի մեջ են, այլեւ կողմերի մոտ առաջընթացի ակնկալիք կա: Մինչդեռ, ամերիկա-իրանական բանակ-

ցությունների հարցն իրոք որ հայտնվեց հարցականի տակ՝ հունիսին Իրանում տեղի ունեցած նախագահական ընտրություններին հաջորդած աննախադեպ զարգացումների¹ պատճառով, երբ Վաշինգտոնը չխուսափեց բավականին ակտիվ դիվանագիտական ու տեղեկատվական ճնշում գործադրել իրանական իշխանությունների նկատմամբ՝ համարելով, որ ներքին ցնցումներն առնվազն կթուլացնեն Թեհրանի դիրքերը բանակցություններում:

Նման պայմաններում մեջտեղ են գալիս առնվազն երկու հարցեր, որոնք չեն կարող նշանակություն չունենալ Վաշինգտոնի ու Թեհրանի միջև ընթացող բանակցություններում:

Առաջին՝ իրանական վերնախավում տեղ գտած ցնցումներն ի՞նչ փոփոխություններ կառաջացնեն իսլամական հանրապետության քաղաքական համակարգում եւ ի՞նչ ձեւով այդ փոփոխությունները կանդրադառնան իրանական արտաքին քաղաքականության վրա, ընդ որում՝ թե՛ բովանդակային, թե՛ ժամանակային իմաստով:

Երկրորդ՝ Իրանում տեղ գտած ցնցումները չեն կարող պատճառ չհանդիսանալ, որպեսզի Միացյալ Նահանգները վերանայի իր գնահատականները իսլամական հանրապետության կարողությունների եւ խոցելի կողմերի վերաբերյալ:

Հայաստանի տեսանկյունից իրադրությունն ունի հետևյալ ձեւակերպումը.

- ❖ մեզ համար ռազմավարական նշանակություն ունեցող Իրանը մուտք է գործում փոփոխությունների շրջան,

- ❖ մյուս կողմից, Միացյալ Նահանգների նոր վարչակազմը պայմանավորվածությունների շարք սկսելով աշխարհի տարբեր ուժի կենտրոնների հետ՝ նաեւ նպատակ ունի հասնել իրավիճակի փոփոխության իր համար էական հանդիսացող իրանական հարցում,

- ❖ ուստի՝ այս նոր զարգացումների ֆոնին, այդ թվում Երեւանի համար կարեւոր է դառնում, թե ինչպիսի պայմանավորվածությունների կարող են հանգել ԱՄՆ-ն ու Իրանը եւ երբ:

Իրավիճակային դիտարկում

Հուլիսի 11-ին Իրանի արտգործնախարար Մանուչեհր Մոթաքին հանդես եկավ ուշագրավ հայտարարությամբ, ըստ որի՝ պաշտոնական Թեհրանը համաձայնագրի նախագիծ է պատրաստում, որով միջազգային քաղաքականության ու անվտանգության հարցերում պետք է փոխհամաձայնություն ձեռք բերվի Արեւմուտքի հետ: Հնարավոր է, որ այդ հայտա-

րարությունը իրանցի հինգ դիվանագետների ազատ արձակման հետ գտնվում է նույն տրամաբանության ներքո, եւ դրա հրապարակումը նույնպես կարող է վկայել առաջընթացի ակնկալիքի մասին: Սակայն, ըստ մեզ, ամերիկա-իրանական բանակցությունների ներկայիս իրավիճակին առավել բնորոշ գնահատական է արեւմտյան մի շարք փորձագետների ներկայացրած կարծիքը, թե այս ժամանակահատվածում Իրանը խուսափելու է հեռահար պայմանավորվածությունների գնալ ԱՄՆ-ի հետ: Որպես պատճառ նշվում են երկու հանգամանք.

1. Իրանի ներքաղաքական կյանքում ի հայտ եկած նոր իրողությունները:

Յունիսի 29-ին Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների խորհուրդը հայտարարեց, թե նախագահական ընտրություններում հաղթանակ է տարել գործող նախագահ Մահմուդ Ահմադինեժադը՝ այդպիսով վերջ դնելով իրավական ճանապարհով ընտրությունների արդյունքները վերանայելու նրա հակառակորդների հնարավորությանը: Իրավիճակը կարծես թե կայունացել է նաեւ իրանական քաղաքներում, եւ թվում է, թե երկիրն աստիճանաբար մտնում է բնականոն հուն (անգամ մասամբ հայտնի են այն փոփոխությունները, որ անելու է Մահմուդ Ահմադինեժադը օգոստոսին հանրությանը ներկայացվելիք իր նոր կառավարության կազմում):

Սակայն այդքանով հանդերձ սխալ կլինի կարծել, թե Իրանին վերջնականապես հաջողվեց դուրս գալ ներքին ցնցումների փուլից: Գիշտ հակառակը՝ ներքին անկայունությունն Իրանում, ըստ ամենայնի, նոր է սկսվում: Այդ առումով հատկանշական է, որ Պահապանների խորհրդի հայտարարությունից հետո, հունիսի 12-ի նախագահական ընտրություններին մասնակցած չորս թեկնածուներից երկուսը՝ Ահմադինեժադի հիմնական հակառակորդ Միր-Յուսեյն Մուսավիին եւ իրանական խորհրդարանի նախկին խոսնակ Մեհդի Քյարուբին, հրաժարվեցին ճանաչել գործող նախագահի վերընտրությունը, ինչն աննախադեպ է իսլամական հանրապետության 30-ամյա պատմության ընթացքում:

Իրանի նախագահի պաշտոնում վերընտրված Մահմուդ Ահմադինեժադը շատ լավ հասկանում է, որ ներքաղաքական պայքարում իր հիմնական խնդիրը ոչ թե բողոքի հանրահավաքների դուրս եկած մարդիկ են, այլ նրանց ու մասնավորապես Միր-Յուսեյն Մուսավիի թիկունքին կանգնած իրանական վերնախավի մի մասը եւ հատկապես Փորձագետների խորհրդի ղեկավար ու համատեղությամբ՝ Նպատակահարմարության խորհրդի նախագահ Ալի Աքբար Յաշեմի-Ռաֆսանջանին: Նշենք, որ անգամ իրանական աղբյուրները չէին թաքցնում, որ առանց Ռաֆսանջանիի

աջակցության, Մուսավին չէր կարողանա կողմնակիցների նման բազմություն հավաքել:

Այսինքն՝ հիմնական հարցը, որն առաջիկայում թելադրելու է Իրանի ներքին քաղաքականության տրամաբանությունը, հետեւյալն է. իր նախագահության երկրորդ ժամկետում Ահմադինեժադն ու նրա թիմը ինչպե՞ս են պատասխանելու Ռաֆսանջանիին եւ ինչի՞ դա կարող է հանգեցնել Իրանի ներքին կյանքում:

Մենք հակված չենք այն կարծիքին, որ Ռաֆսանջանիի թիմի հաղթանակի պարագայում Իրանի արտաքին քաղաքականության մեջ կարող էին ի հայտ գալ էական փոփոխություններ: Բայց հիմնավորված ենք համարում այն տեսակետը, որ իրանական վերնախավում առաջացած նման անկայունության պայմաններում, Թեհրանը, մասնավորապես, Վաշինգտոնի հետ չի գնա հեռուն գնացող պայմանավորվածությունների: Յետեւաբար, Իրանի համար ավելի հավանական է դառնում դադար վերցնելու տարբերակը՝ զուգահեռ փորձելով արդյունավետ միջոցներով (օրինակ, անկայունության տարածում Իրաքում, Աֆղանստանում) ուժեղացնել իր բանակցային դիրքերը ԱՄՆ-ի հետ:

2. Ռուսաստանի ու Միացյալ Նահանգների միջեւ ընթացող բանակցությունները:

Թեեւ հուլիսի 6–8-ը Մոսկվայում տեղի ունեցած ռուս-ամերիկյան գազաթափողվի արդյունքում էական որեւէ փոխհամաձայնության մասին չհայտարարվեց, սակայն՝

– Աֆղանստան ռազմական նշանակության բեռներ տեղափոխելու շուրջ Պուտին–Օբամա պայմանավորվածությունը,

– հուլիսի 7-ին Ղրղըզստանի նախագահ Բակիեւի ստորագրած պայմանագիրը, որով ամերիկյան կողմին \$180 մլն-ի դիմաց վերստին հնարավորություն է տրվում օգտվել «Մանաս» օդանավակայանից (ամերիկացիները նույնպես ընդունում են, որ դա անհնար էր առանց Մոսկվայի համաձայնության),

– ՆԱՏՕ-ին Ուկրաինայի ու Վրաստանի անդամակցության վերաբերյալ Մոսկվայում կատարած Օբամայի հայտնի հայտարարությունը, որով տեսանելի ապագայի համար, փաստորեն, անհնար համարվեց Կիեւի ու Թբիլիսիի միանալը ալյանսին,

– եւ վերջապես՝ ռազմավարական նշանակության միջուկային զինանոցի հետագա կրճատման մասին ձեռք բերված սկզբունքային պայմանավորվածությունը,

երկու կողմերին հիմք տվեց խոսել եթե ոչ փոփոխությունների, ապա գոնե սկիզբ առած դրական դինամիկայի մասին:

Իհարկե, ռուս-ամերիկյան հիմնարար հակասությունները չեն վերա-
ցել, սակայն կա առնվազն մի հարց, որի առնչությամբ Մոսկվան ու
Վաշինգտոնը պետք է պայմանավորվեն, եւ այն այլեւս հնարավոր չէ
ծոզոզել: Խոսքը Լեհաստանում ու Չեխիայում ամերիկյան հակահրթիռային
պաշտպանության համակարգի տարրերի տեղակայման մասին է: Հայտնի
է, որ Օբամայի վարչակազմը դադար տվեց այդ ծրագրի իրագործման
հարցում եւ այն ռուսական կողմի հետ դարձրեց բանակցությունների
առարկա: Գաղտնիք չեն այն աշխարհաքաղաքական ու ռազմատեխնի-
կական խնդիրները, որ կծագեն Մոսկվայի առջեւ՝ Լեհաստանում ամերիկ-
յան հրթիռների տեղակայման դեպքում (ամերիկացի մի փորձագետի
դիպուկ բնութագրմամբ՝ Լեհաստանը Մոսկվայի համար դարձել է այն, ինչ
Իրանը Վաշինգտոնի): Մոսկվայում Օբաման հրաժարվեց քննարկել
լեհական հարցը՝ այն նաեւ կապելով իրանական խնդրի հետ, սակայն
հայտնի է նաեւ, որ այս սեպտեմբերին նախատեսված պետքարտուղար
Հիլարի Բլինթոնի մոսկովյան այցելության ժամանակ հարցը քննարկվելու
է: Այն, որ Վաշինգտոնը, ըստ ամենայնի, պատրաստ է լուրջ զիջումների
գնալ Լեհական ուղղությամբ, կարծես թե այլեւս գաղտնիք չէ: Ողջ հարցը,
սակայն, այն է, թե դրա դիմաց ամերիկացիները ինչ կցանկանան վերցնել
ռուսներից եւ ինչ կարող են նրանց տալ ռուսները:

Ցուցակում առաջին տեղը իրանական հարցն է: Իրանում հասկանում
են, որ ամեն դեպքում Ռուսաստանը չի հրաժարվի իրանական ուղղութ-
յամբ առկա իր բոլոր հնարավորություններից եւ ամբողջովին չի խզի
կապերը Թեհրանի հետ, որոնք պետք եղած ժամանակ նրան հնարա-
վորություն են տալիս բավական արդյունավետ կերպով ճնշում բանեցնել
ԱՄՆ-ի նկատմամբ, սակայն դա չի էլ նշանակում, թե Մոսկվան մասնակի
զիջման չի գնա իրանական հարցում: Մանավանդ որ նման ենթադրության
համար իրանցիները թարմ հիմքեր ունեն: Այսպես՝ հունիսի 10-ին, Օբա-
մայի մոսկովյան այցելությունից առաջ, ռուսական «Атомстройэкспорт»
ընկերության տնօրեն Դան Բելենկին հայտարարեց, թե ռուսական
բանկերը հրաժարվում են աշխատել իրանական ուղղությամբ, եւ
ներկայում իրենք ստիպված փոխում են ֆինանսավորման մեխանիզմը,
ինչն իրանական ու արեւմտյան դիտորդների կարծիքով՝ ռուսական
կողմի համար նոր առիթ է՝ դարձյալ հետաձգել «Բուշեիր» ԱԷԿ-ի գոր-
ծարկումը: Իսկ հուլիսի 8-10-ը իտալական Ակվիլայում կայացած Մեծ
ութնյակի գագաթաժողովի արդյունքում որոշվեց Իրանին մինչեւ այս
սեպտեմբեր ժամանակ տալ, որպեսզի այն իրականացնի ՄԱԿ Անվտան-
գության խորհրդի որոշումները՝ կապված իր միջուկային ծրագրի հետ,
այլապես Թեհրանի նկատմամբ կսահմանվեն նոր պատժամիջոցներ:

Հասկանալի է, որ նման որոշումն չէր կարող կայացվել առանց Մոսկվայի համաձայնության:

Թեհրանում ընդունում են, որ Վաշինգտոնի հետ իրենք չեն կարող հանգել այնպիսի փոխհամաձայնության, որը կկարողանա կանխել ամերիկա-ռուսական հնարավոր պայմանավորվածությունը, այդ թվում՝ իրանական հարցում, ինչին ԱՄՆ-ը ձգտում է՝ թուլացնելու համար Իրանի բանակցային հնարավորություններն իր հետ: Այս պայմաններում, երբ Վաշինգտոնը Մոսկվայի հետ կրկին մուտք է գործել պայմանավորվածությունների կայացման փուլ, Թեհրանում պետք է որ խուսափեն ԱՄՆ-ի հետ փոխհամաձայնության ձեռքբերումից, ինչը կնվազեցնի Իրանի արժեքը թե՛ ամերիկացիների, թե՛ ռուսների մոտ:

¹ Շատ դիտորդների կարծիքով՝ ներքին ցնցումներն Իրանում աննախադեպ էին ոչ այնքան իրանական խոշոր քաղաքներում տեղ գտած հուզումների, որքան իրանական վերնախավի ներսում ի հայտ եկած այնպիսի հակասությունների պատճառով, որոնք չհաջողվեց կարգավորել փակ դռների հետեւում՝ բանակցությունների միջոցով:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տեր-Հարությունյան ԱՊԱԳԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ	1
Սուրեն Մանուկյան ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԶԵՆՔ	6
Արեստակես Սիմավորյան ԶԱՎԱԽՔԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԿՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ	12
Ռուբեն Մելքոնյան ԱԶԳԱՅՆԱՄՈԼՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 17	
Կարեն Վերանյան ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԱԴՐԲԵԶԱՆԻ ՇՈՒՐԶ	21
Արաքս Փաշայան ԹԱԼԻՇՆԵՐՆ ԱԴՐԲԵԶԱՆՈՒՄ	26
Սեւակ Սարուխանյան ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ	31
Արտաշես Տեր-Հարությունյան ԻՐԱՆ–ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ	35

*Շապիկին պատկերված է
Սիփան լեռը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «VS Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: